

Сурен 140

Ա. ԶՈՐՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԻНСТИՏՈՒ  
ՏՈՒԹՈՒՅԵԼԻ  
Ակադեմիա Խոր  
ՀՍՀ



ԳՐԱԴԱՐԱՆ  
ԱՊՏԻԿԸ

891. 99

9 - 83

„ԶԵՐՄԵՒ“ ՀՐԱՄԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ, ՅԵՐԵՎԱՆ.

N 997

30 MAY 1960  
Cygler M 140



4  
С а 1386

891.99

2-83

Ա. ԶՈՐՅԱՆ

# ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂՋԻՔ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

№ 1.

„ԶԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926.

(Մի կոնջ պատմած)

## 1.

Մեծ չի մեր քաղաքը, բայց սիրուն ե. մի կողմը անտառ ե, մյուս կողմը՝ սարեր, յետեր՝ սարեր, առաջը՝ սարեր, ու եդ սարերի ու անտառի արանքում—մեր քաղաքը։ Յերեք կողմից ել ջրեր են գնում խշալով. յերբ գիշերը, քաղաքի քնած ժամանակ, գուրս ես գալի դուռը—սմեն կողմից ջրի խշոց ե լսվում—խըշ, խըշ... Ականջներդ թշում են։ Միայն են ժամանակ, յերբ պոելը գրգռալով գալիս ե ու շրջացնում՝ ունե—սար ու ձոր գմբգմբում են, եդ ժամանակ ել ջրի խշոց չես լսում։ Միայն եդ ժամանակ։ Լավ քաղաք ե մեր քաղաքը. ամեն տան առաջ ծառ ու բաղչա, ամեն հայաթում՝ մի ջրհոր... Կաթը առատ, ձուն՝ եժան. գեղերից բերում են ու թափում։ Զմեռը ցուրտ ե մի քիչ, բայց ամառ՝ հճվ. ամբողջ որը քամին սըլորում ե։ Դրուստ ե անձրե ել շատ ե գալիս,

ՏԱՐԱՆ „ՀԵՐՄԵՍ“  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
ՅԵՐԵՎԱՆ, ՄԱՐՔԻ  
Փ. 29. ԳՐԱՌԵՊՎԱՐ  
№ 392Բ. ՏԵՂ. 2000.



59605-66

բայց վոր արել դիպչում եւ արքայություն եւ դառնում։ Մի խոսքով ենապես չի, ինչպես Երեւանում։ Հիմի կասեք, յեթե ենտեղ լավ եր, բա ինչու ես յեկել Երևան։ Յեթե ինձ մնար, իհարկե, չեյի գա։ Բայց աղջիկս ինքը յեկավ եստեղ ու պատճառ եղավ, վոր յես ել գամ։ Ինչքան ասի՞ տեղահան չըլեմ։ չեղավ։ «Չե, մայրիկ, ասում ե, անպատճառ պիտի գաս»... Դե, յես ել ունեմ-չունեմ ես մի աղջիկն ե։ Մտածեցի՝ լավ չի ապրենք իրարից հեռու, ջոկ-ջոկ։ լվացքով պահել-մեծացրել եմ, ուսում եմ տվել-հիմի թողնեմ մենակ։ Լավ չի, ասի ու եկա։ Յեթե տղեա՝ Յերվանդս կենդանի ըլեր-ելի վոչինչ-կարող եյի մնալ մեր քաղաքում։ Բայց Երեխես դնաց, կորավ անհետ։ Վոչ բարով կովի առաջին տարին ազատվեց փորպես մինուժար, բայց մեր առնտեր-խալփա Միխակը ու տերտերի ատվակատ տղեն՝ Վաղարշակը, կանչեցին թե՝ «արի, կամավոր գրվի, մեր ազգը, ասում ե, պետք ազատենք»։ Տղես թե՝ «ինձ ազատել են, ասում ե, վոր յես մորս ու քփորս պահեմ։ Յեթե կամավոր գրվեմ, ասում ե, բա նրանց ովկը կը պահի»։ Նրանք թե՝ «Մերդ, փառք աստծու, դեռ աշխատում ե, լվացք ե անում, իրան ել կը պահի, քփորդ ել։ Իսկ յեթե մերդ կարիք ունենա, ասում են, մենք կը պահենք»... Ու սկսեցին ա-

մանչեցնել Երեխիս-Միխակը ջոկ, տերտերի առվակատ աղեն՝ Վաղարշակը ջոկ։ «Բա ամոթ չի քեզ պես յերիտասարդին, ասում են, եսպես ժամանակ տանը նստես. աշխարհի ամեն ծերից, ասում են, հայ տղերքը կամավոր են գրվում-գալիս մեր հայ ազգը ազատելու-դու եստեղ՝ չես ուզում գրվել։ Ենքան ասին, ենքան զլուխը տարան-գրվեց։ Գրվեց ու զնաց մեռավ... Եհ, լավ ե եղ բաները չհիշեմ, թե չե ցավս կը նորոգվի նորից։ Դուք հարցնում եք աղջկանու մասին։

Եղպես ուրեմն-վորդուցս հետո մնացինք յես ու աղջիկս։ Ապբում եյինք, եղ վոր խալփա Միխակ յեմ ասում—նրա տանը։ Դա ինքը հարուստ վաճառական եր. Թիֆլիսից միշտ վազուով ճոթ-կտոր եր բերում ծախում։ Մեծամեծ մարդկանց հետ նստում եր, վեր կենում։ Լավ ել հագնվում եր-կրախմալ, ըլապա, շորերը միշտ չուկած ու վոնց վոր ասեղի տակից նոր դուրս քաշած։ Մի խոսքով՝ մեր քաղաքի առաջավոր մարդկանցից մինն եր։ Կովի ժամանակ ել կոմիտեյի մեջ գործ ուներ-կամավոր եր գրում, ինչպես ասի, փող եյին հավաքում-եղպես բաներ ինքը Միխակը իրա ընտանիքով-կնիկը՝ կիզինկեն ու յերկու աղջիկը—Անիչկեն Առնիչկեն ապրում եյին վերե, յես ներքին պատ-

վարո՞մ։ Եղ պադվալի յերեք աչքը նրանց ձեռին եր—փետ ելին գարսում, ձմռվա պաշար ելին պահում՝ կախաններով տանձ, խաղող, և ուրիշուրիշ բաներ։ մի աչքն ել իմ ձեռին եր. փոքրիկ, ցած ոթախ եր՝ պատերը սվաղած, պուլ քարփչից. յերկու ել նեղ լուսամուտ ուներ. ենքան ցած ելին, վոր գուրաը մարդկանց վոտներն ու ծնկներն եր երկում մենակ։ Յերկու մանեթ քրեհ ելի տալի, շաբաթը մի անգամ ել վացքները անում քրեհի տեղ։

Եսպես ապրում ելինք—յես լվացք ելի անում սրանրա համար, Վիկտորը զպրոց եր զընում։ Յես բան չեմ հասկանում, բայց բոլորն ել ասում ելին, վոր լավ ե սովորում, առաջադեմ ե։ Կային մարդիկ ել, որինակ, Միխակն ու կնիկը՝ Լիզինկեն—ասում ելին. «Հանի աղջկանըդ դպրոցից, թող մի տեղ ծառայի, քեզ ոգնի. ինչ սումի տեր ես, վոր աղջիկդ ուսումի ես տալի»։ Յես—չե։ Ասում եմ՝ իմ հերը մի լավ բան չի արել, վոր ինձ ուսում չի տվել. թող մի քիչ ել նեղ ապրեմ—մի աղջիկ ե բան սովորի… Են ժամանակ, յերբ Յերվանդս սպանվեց —Վիկտորը ավարտելու վրա եր։ Վեցութ տարի սովորեց—եղ տարին նոր ավարտեց, Յերբ ավարտեց—սրան-նրան խնդրվեցինք—զբագարանումը պաշտոն տվին։ Թեթև, մաքուր գործ եր.

գիրք եր տալիս կարգալու, գրում եր ում գիրք տվեց, ումից ստացավ. պատուած զրքերը կարում եր, կպցնում։ Ու ինքն ել կարգում եր, կարգում, ինչպես զպրոց գնալու ժամանակ։ Ել գիրք չեր միում զրադարձնում—բերում—կարգում եր։ Յերեկը մինչև իրիկուն, իրիկվանից մինչև կես գիշեր։

— Աղջի, Վիկտոր, հաց կեր։

— Մայրիկ ջան, եսքանն ել պրծնեմ հետո, եսքանն ել կարգամ—նոր…

Ու կարգում եր տերտերի պես… Մեկ-մեկ ել կը նստեր կարգացածից կը պատմեր—ես բանը եսպես եղավ, են բանը—ենպես։ Պատմում եր եղ զրքերը զրողների մասին, ես զիրքը զրողը, ասում ե, եսպես հասարակ մարդու վորդի յեյեղել, բայց տես ինչպես բաներ ե զրել… Կարգում եր հայերեն, սուսերեն։ Կարգում եր ու պատմում ինչպես են ապրում ուրիշ յերկիրներում, ինչպես են մարդիկ հարստանում, ինչպես են աղքատանում… Շատ բան չելի հասկանում… Կը պատմեր եսպես, կը պատմեր մեծ քաղաքների մասին, կը պատմեր ինչ պըտի ըմբ հետո, մեզանից եսքան տարի… Յես ել շատ բան չելի հասկանում, կը լսելի—կը լսելի ու կասելի—Եհ. եղ բոլորը վոր մենք չենք տեսնում, Վիկտոր ջան…

— Կը տեսնենք, մայրիկ, ասում ե, կը տեսնենք մի որ…

Եղ ժամանակներն եր, վոր խաբար յեկավ, թե թագավորին քցել են թախախից: Ի՞նչ ուրախություն եր: Ամեն տեղ կարմիր զրոշակ կախեցին ու սկսեցին ձառեր ասել: Ժողովուրդը մի քանի որ փողոցներից տուն չեր գնում: ձառեր են ասում, ուրախանում, ծափ են տալի. «Կեցցե հեղափոխութինը, կեցցե հեղափոխութինը»: Յես չեյի հասկանում ինչ բան է եղ «հեղափոխութինը», բայց մտածում եյի, վոր սրա վերջը վատ պիտի ըլի. անթագավոր յերկիր չի ըլի: Մի քանի որ հետո ել Հայկ Ազատյանը յեկավ Թիֆլիզից ու ձառ ասավ: Խոսեց, աման, խոսեց, խոսեց, հալեց՝ գլուխները լցրեց: Թե ել հին գլավա, հին նաչալինիկ, հին չինովնիկ չպիտի ըլի. թե՝ զրանք բոլորը թագավորի մարդիկն են, բոլորին պիտի քշել... Դրանից հետո եր, վոր պրիստալին բոնեցին, նաչալինիկին բըռնեցին, միքավոյսուր փախավ, լիսնիջը փախավ, սարաժնիկների պագոնները պոկեցին, մի քանիւմին ծեծեցին, մի քանիսը փախան. տղերքն ընկան փախչողների յետեից. վագում են ու ոռուսերեն գոսում. «Դրօի յեվո, կալափի յեվո, մինել գիտեմ վոչ ինչ յեվո...» Եղպես զոռալով ձի քշեցին սրամնիկների յետեից ու զնացին... Նրանք գնում են—շները նրանց յետեից... եւ բանը ես իմ աչքով տեսա արդեն...

Ինչի՞ յեն եղպես անում, մտածում եմ, խեղճ սարաժնիկները ինչով են մեղավոր. շատ ել թագավորին քցեցին—սարաժնիկներին ի՞նչու եր ծեծում: Վիկտորը թե՝ «Եղպես ել հարկավոր ե դրանց, քանի վոր դրանք թագավորին ծախված մարդիկ են», ասում ե: Դրանից հետո սկսեցին հակալ-հակալ անել ուրիշ մարդկանց ելմի պիտր բոնեցին, թե մատնիչ ե, մի ոռուս վարժապետ ել, թե (խոսքն ել լավ չեմ կարում ասի) պրավականել ե...

Ու հետո՝ ժողովք, ժողովք, ժողովք... Ամենոր: Եղ որվանից Վիկտորիս քունն ել փախավ, հանգիսան ել: Ցերեկը՝ գրադարան, իրիկունները՝ ժողովք. իսկ գիշերները՝ չի քնում: Կարդում ե: Կարդում ե հայերեն, ոռուսերեն: Գրքեր, կազմերներ:

— Աղչի բոլ ե. Եղքան կարդալ չի ըլի, ասում եմ,—ինչքան կարդացել ես՝ հերիք ե: Մի բան վոր ավարտել ես. ել կարդալը ինչիդ ե պետք:

— Եհ, մայրիկ, ասում ե,—գու չես հասկանում. գեռ ինձ հարկավոր ե շատ բան կարդալ: Ուրիշները, ասում ե, բարձր ուսում են առնում, Պետերբուխ, Մոսկով են գնում—յես ել ասում ե, գոնյա տանը կարդամ:

— Աղջի, ասում եմ, ախր աչքիդ լույսն ել կերթա, գիտիդ ել խելք չի մնա...

Մւմ ես ասում: Շորերը հագին կարդում ե, կարդում լամփի առաջ, հետո շորերը հանում՝ մանում տեղը, լամփը դնում ե կողքին՝ սեղանի վրա, ու ելի կարդում: Քնում եմ, զիշերվա կեսին գարթնում—տեսնեմ՝ կարդում ե ելի. հիմի ել զիրքը բարձին ե, դրել, յերեսի վրա ընկել ու կարդում ե: Եսպես—իրան տվել եր զըքին. ինչ անում եյի պոկ չեր գալի: Տեսնում եյի ճար չկամեկ-մեկ ել բարկանում եյի.

— Աղջի, աչքերդ չես ինայում, զոնյանավթը խնայի. կրակի գին ե դառել. լիացք անելով, ասում եմ, քու նավթի հախիցն ել չեմ գա, եգ ինչ դու յես նավթ փչացնում:

Նա թե՛ Մայրիկ ջան մի խանգարի. յես նավթը կառնեմ. եգուց բան պըտի խոսեմ ժողովում, թող նութ քաղեմ:

— Աղջի, բոլ ե, ասում եմ, դու ինչ գործ ունես ժողովում. ինչ քու բանն ե դա: Հրե, ասում եմ, Միխակի աղջկերքն ել աղջկերք են—ինչի ժողով չեն գնում, յեթե ժողովը լավ բան ե. չե վոր նրանք քեզանից ավելի ուսում ունեն:

— Նրանք հեշ ասում ե, ինձ նրանց թայը մի անի. նրանք չեն ել ծառայում. նրանցը են ե՝ պատրաստ ուտեն ու պուդրի քսեն՝ ման զան:

Եղ մեկը դրուստ եր ասում: Տնաշենի աղջկերքը ամեն որ ուանդ-ուանդ պուդրի եյին քսում ու՝ ես ինչ ե—թատրոն, ես ինչ ե—կլորի, վակալ. ամբողջ որը զոնթիկը բոնած՝ ման եյին գալի, բայց ժողովք՝ սկի:

— Պուդրի յեն քսում, բայց քեզ պես մազները չեն կտրում, ասում եմ, ու ժողով վազում:

— Մազերն ի՞նչիս են պետք, մայրիկ, ասում ե. — յես հո նրանց պես վեսի չեմ ման գալի:

— Բա ինչ, ասում եմ, աղջկանն ել վեսա ե պետք: Են տղերը բա, ասում եմ, վոր քեզ հետ ման են գալի ի՞նչ են:

Ես ասում եմ հանաքով:

Նա թե՛ ընկերներ են, ասում ե:

— Աղջի, ասում եմ, աղջկա ընկերը աղջիկ կրիփ...

— Ե՞ն մայրիկ, ասում ե, դու բան չես հասկանում...

Դրուստ վոր բան չեյի հասկանում: Եսպես որերը գնում են—դա՝ ժողով, գրադարան, կարդալ: Մեկ-մեկ ել մանիլի կնանիք խաբար են բերում, թե Վիկտորդ ես ինչ տեղը խոսեց, են ինչ տեղը ճառ ասավ: Մնացել եմ շվարած: Ես աղջկերք գժվել ե, ասում եմ. սրա կապը պըտի քաշել: Մի որ ել մեր տանտեր Միխակն ե զանգատվում, թե «աղջիկդ կոտը զիմել ե»:

— Խի, ասում եմ, խալիս, ի՞նչ ե արել:

— Շատ ե յերես առել, ասում ե, ամեն բանի մեջ ե ընկնում, վիճում:

— Ինչ կա վոր, խալքա, ասում եմ. ջահել աղջիկ ե, հավեսի յե ընկնում, խոսում ե. ուրիշների նման հո քեֆեր չի անում գիշերները...

— Զե մի՛, եղ եր պակաս, ասում ե. դու աղքատ կնիկ ես՝ քու աղջիկը պետք ե համեստ ըլի:

Տեսա շատ ե բարկացած—ել բան չխռուցի. ել չարցըի, թե պատճառն ինչ ե, վոր բարկացել ե: Նոր իրիկունը միայն իմացա, վոր վիկտորը դրան ժողովի մեջ «բուրջվազ» ե ասել: Եղ ել իրանից՝ վիկտորից իմացա:

— Վույ, քոսանամ յես, աղջի, ասում եմ.— դու նրա գեմ լեզու յես բանեցնում: դու ով ես վոր, ինչ նոր վորդի յես, ասում եմ. ուզում ես մեղ տանից գուրս անի:

— Գլուխը քարը կըտա, ասում ե, թող դուրս անի. սրա պես տուն շատ կա:

Ու բարձր ել խոսում ե:

— Ձենդ կորի աղջի, ասում եմ. վերել կիմանան, կը խայտառակվենք:

— Նա ինքն, ասում ե, խայտառակությունից աղատվել ե, վոր մեղ ել խայտառակի:

— Ի՞նչ ե արել. նրանից ել կարգին մարդ:

— Լավ կարգին մարդ ես գտել, ասում ե.—

Խանութում յերկու աշկերտ ե պահում—մի կոպեկ չի տալի: Վարժապետների յերեք-չորս ամսովա սոճիկը ուշացնում ե, վոր եղ փողովը առուտուր անի, ոգտիլի:

— Ինչ անենք, ասում եմ.—մարդ ե, փողի պակասութին ե ունեցել... Վարժապետների սոճիկը հո չի կերել:

— Ե՞ս, մայրիկ, ասում ե.—դու բան չես հասկանում. ավելի լավ ե չխոսենք:

Ու իրան նորից տալիս ե կարդալուն:

Ի՞նչ պըտի ըլի ես աղջկա վերջը, մտածում եմ,— վոնց անեմ, վոր սրան ճամփի բերեմ ու եղ բաներից հեռու պահեմ: Բայց ինչ.—յես լվացքի, նա իրա գըաղարանում—ինչ ասես անում ե, ում հետասես խոսում ե: Գործս պըծնելիս՝ մեկ-մեկ գալիս եյի գըաղարան՝ ես կամ են բանը ասելու—տեսնեմ գա գիրք ե տալի սրան-նրան—տղի, աղջկա, մարգու, կամ գրքերը նշաններ ե անում, շկաֆներում դարսում: Մեկ-մեկ ել գընում եյի, տեսնում—տղա, աղջիկ գլխին հավաքած՝ բան ե բացատրում—«եսպես գիրք ե, եսպես կը կարդաք». ամեն մեկին ջոկ, ամեն մեկին առանձին... Մեկ-մեկ ել վիճում եր հասակն առած մարդկանց հետ, վարժապետների հետ: Նա իր կարդացած գրքերից, նրանք՝ իրենց: Շատ ժամանակ ել ենպես բաներ եյին խոսում, վոր

յես, անգետ կնիկ, բան չեյի հասկանում, բայց  
տեսնում եյի, վոր Վիկտորը՝ բոլորին լեզվակոխ  
ե անում: «Ես ինչ բան ե ես աղջիկը, մտածում  
եմ, չի ել քաշվում իրա վարժապետներից»: Յես  
նրա տեղը ամանչում եմ, բայց նա—նեչ:

— Զալըմ աղջիկ ունես, ասաց մի որ վար-  
ժապետներից մինը, յերբ եղակ ելի գրադարան  
եյի գնացել, լսում եյի նրանց զրիցը.—Հախից  
կարըմ չենք գալ, ասում ե.—Մնում ե վոր սր-  
բան կենինի մոտ զբկենք:

— Կենինն ով ե, քա...

Թե՛ բալշեկիկների մեծը: Ես խոսքը մի քա-  
նի անգամ ականջովս եր ընկել, բան չեյի հաս-  
կանում, ես անգամ ասի՞ մի հարցնեմ.

— Բալշեկին ինչ ե, ասում եմ, զա ով ե:

Թե՛ «քու աղջիկը»...

Ելի բան չհասկացա, բայց ամոթից չխո-  
սեցի:

Եղ ժամանակներն եր, վոր յեկան թե՛ թա-  
գավորի տեղ ժողով ենք ընտրելու: Մի քանիսից  
ել լսել եյի, վոր նոր թագավոր են ընտրելու.  
բայց Վիկտորը թե՛—վոչ մի թագավոր ել չենք  
ընտրելու, վոչ նին, վոչ նոր. թագավորի փոխա-  
րեն, ասում ե, մի ժողով ե լինելու (անունն ել  
գիտեմ վոչ ինչ), վոր պետք ե կառավարի, յերկի-

59605 - 66

րը: Եսպես բաներ: Մի քանի որ հետո ել թե՛  
բնարում ենք: Եերին մեր քաղաքի պատերին նո-  
մերներ կպցըին—ամեն մինը մի զազ, ու ժողո-  
վրդին իմացըին, վոր ես ինչ որը զաք՝ նոմեր  
քցեք: Եղ բանում Վիկտորն ել աշխատում եր:  
Նա ել թուղթ եր տանում՝ սրան-նրան տալի,  
ժողով եր զնում, մի խոսքով ամբողջ որը հոլի  
պես պատվում եր: Եղ ժամանակ, մի որ մեր տան-  
տեր Միխակի կնիկը—Լիզինկեն հարցնում ե  
ինձ.—Աննա, ինչ նոմեր պիտի քցես:

— Յես ինչ զիտեմ, ասում եմ. առանց իմ  
քցելու ել յոլս կերթան:

— Զե, ասում ե, ինչու. անպատճառ պետք  
ե քցել: Բայց վոր նոմերը կուզես քցեվ հար-  
ցնում ե ելի:

— Գիտեմ վոչ, ասում եմ. Վիկտորս ասում  
ե հինգ նոմերը քցի:

— Զե, ասում ե.—հինգ նոմերը չարժի. չորս  
նոմերը քցի. իսկականը զա ե. մնացածներն, ա-  
սում ե, մեր ազգի հետ կազ չունեն. զալը են:

Վիկտորը տուն յեկավ—խոսքի մեջ պատմե-  
ցի, թե Լիզինկեն եսպես-եսպես: Դա բարկացավ,  
կամներն առաջ քարերն ընկավ:

— Գլուխը քարովն ե տալի, ասում ե, զալըը  
ինքն ե ու իր մարդը, զալըը իրանց նոմերն ե...

Խոսեց եսպես, խոսեց, խոսեց, վերջը՝

— Դու կերթաս, ասում ե, քեզ ինչ ասել եմ  
— են ել կը քցես...

Չեսս ել մի թուղթ ե տվել, վոր քցեմ:

Նոմեր քցելու որը գնացի ուստմարան.  
Ենտեղ եյխն քցում: Մի չորս-հինգ յաշելի եր  
պրված. են կողքին ել հինգ վեց մարդ եր նըս-  
տած: Ենքան ել ժողովուրդ կար վոր... Անհա-  
շիվ: Մեր տաճառերը—խալիս Միխակն ել եղտեղ  
եր: Ինձ վոր տեսավ՝

— «Դու ել ես եկել, Անսատ, ասում ե.—ինչ  
նոմեր ես քցնեմ:

Յես ձեռիս նոմերը ցույց տվի:

Դա առավ ու գեն շպրտեց:

— Դա հեջ, ասում ե, առ աս քցի...

Ու ավեց մի ուրիշ թուղթ: Ենքան մարդ  
կար, վոր ամոթից ել չուզեցի ասեմ, թե Վիկ-  
տորս եսպես ե ասել: Գլուխը քարը, մտածեցի,  
իմ քցելովը կամ չքցելովը ինչ պըտի ըլի, թող  
քցեմ կորչի, յես գնամ իմ բանին: Եսպես մտա-  
ծելով՝ առա ու քցեցի...

Հետո վոր ես բալորը Կիկորը իմացավ—ինձ  
վրա շատ բարկացավ: Շատ:

— Դու, ասում ե, անհասկացաղ կսիկ ես.  
քու լավն ու վատը չես հասկանում, գնացել ես  
քու թշնամիներին ձեն տվել:

— Ի՞վ, ինչ թշնամի, ասում եմ,—ինձ հա-  
մար մին ե, մի տեղ նոմեր պըտի քցեմ—քցեցի:

— Սկի ել մին չի, ասում ե.—հենց բանն  
ել են ե, վոր մին չի. դու պետք ե, ասում ե,  
ձեն առա նըսն ով քու մասին մտածում ե, ով  
քեզ կարող ե պաշտպանել:

— Ե՞ն, ասում եմ,—ասաված իմ պաշտպանը  
խլեց են որից, յերբ Յերվանդս պանդից. ել ում  
դարդն ե կարել, ասում եմ, ինձ պաշտպանի.  
Եսպես եկել եմ, եսպես ել կերթամ:

Նա թե՞ չի.—դու սխարվում ես. նոմեր հին-  
գը են ե, վոր քեզպեսներին պաշտպանի:

— Յես բան չեմ հասկանում, ասում եմ:

— Դե վոր չես հասկանում, ասում ե, հաս-  
կացողին լոի:

Ու բարկացավ, վասները խփեց զետնին.  
Խոռվեց ինձանից: Խռովեց վոչ թե ենպես, վոր  
չեր խռում. նեղացավ, թե ինչու իրան չեմ լսել:

Եղագես: Եղ ժողովն ել, վոր վիրջացավ—դա  
սկսեց մի ուրիշ բան: Հերիք չեր մինչև կես զի-  
շեր կարդում եր ելի՛ հայերեն, ուսւերեն,—հի-  
մի ել առավոտները վաղ վեր եր կենում՝ վազում  
վակալ, զալիս եր զոռով մի թաս չայ իմում  
ու զրադարձն...

— Եղ վակալ ինչի յես դնում, աղչի, հար-  
ցնում եմ:

ԹԵ՞ «Գրադարանի համար գիրք, կազեթ  
ստանալու...»:

— Հասպա դու ասում եյիր վուօսով Ի՞ք ստա-  
նում:

— Հիմի մի մասն ել պոեզով ե գալիս,—ա-  
սում ե:

Բայց, աւեմնում եմ, եղ բերած թղթերը  
գնում ե տուն ու ենակես գնում գրադարան:

Մեկերկու, մի որ ել հարցրի.

— Բա ի՞նչու ես թղթերը հետդ չես ամսում:

— Թող մնա, ասում ե, հետո կը ամսեմ:

Եղակես ել գնում եր իրիկվա պոեզիա: Մեկ-  
մեկ ել, աեսար, բերեց հրես մի կամ յերկու  
աղա կամ մի աղջիկ—իրա նման ժաղերը կարած

— Մայրիկ, ծանոթացիր, իմ ընկերը ես ի՞նչը:

Հետո ել թե՝

— Ծնկերը քնելու աեղ չունի, մեր ամսու-  
պըտի քնի:

Ինչ ասեմ, աեսնում եմ անտուն աղերք են,  
աեղ եմ քցում, մաքուր սավան եմ փոռում, իրա  
վիկտորի բաժինքի բարձը գնում եմ դրանց դրէ-  
խատակը: Թող փափուկ ըլի, ասում եմ, սրանք  
ել մի մոր վորդի յեն, փափուկ բարձի սովոր,  
ինչ անենք վոր եսոր ստարութին են զուրս  
յեկել... Մի գիշեր քնում են դրանք, սափուրը  
գնում: «Ուր գնաց, աղջի», հարցնում եմ վիկ-

տորին: Նա թե՝ «վոչինչ, մոտիկ գեղը գնաց...»:  
Մի քանի որ հետո եղ աղեն, եղ աղջիկը նորից  
են գալիս: Կապոցով թղթեր են բերում, ինչ վոր  
բան են փափսում: Կամ թե վիկտորը վակզալից  
բերած թղթերը տալիս ե դրանց—գնում են: Մի  
քանի որ, մի շաբաթ, ավելի աներեսոյթ են  
ըլում—մեկ ել հանկարծ լուս ընկնում: Զե-  
նում եմ դրանց արածը ուրիշ բան ե, ինչ-վոր  
փափսում են, թագուն բաներ են անում: Տես-  
նում եմ, վոր մեր տուն յեկողները մթնով  
գալիս են, առափուր վաղ գնում, ենակես վոր  
հայրաթում գեռ մարդ զարթնած չի ըլում: Գնա-  
լիս ել միշտ խցկոտում են, իրանց չորս կողմը  
հայում, թե մարդ հո չի տեսնում իրանց:

«Զե, մտածում եմ, սրա վերջը վատ բան ե  
ըլուու: Ես աղջիկն իմ զլուխը փորձանք ե բերելու»:  
Եղակես ել եղալ:

## 2.

Ինչ վոր պատմում եմ — մայիսին եր,  
հենց մայիսի իրա առաջի որը՝ մայիսի մեկին:  
Մինչեւ եղ՝ յես, մեզքս ինչ թագցնեմ, չեյի իմա-  
նում, վոր մայիսի մեկը տոն ե, բայց բանից  
գուրս եկավ, վոր եղակես ե—տոն ե:

Ինչեր պատահեցին եղ որը, աման... Ամե-  
նից առաջ եղ մայիսի մեկի սուտփուր յերկու

տղա եկան՝ Վիկտորին կանչեցին։ Վիկտորը զբանց հրավիրեց ներս։ Եկան դրանք, երկուան ել բլուզ հագած ջահել աղեք։ Եկան թե «ընկեր Վիկտոր, դրոշակը տնւք...» Մոռացա տոհմ, վոր մի քանի որ առաջ Վիկտորը մի կարմիր կրտոր եր բերել ու յերկու որ վրեն չարչարվել տառեր եր գըշել թե «Լիցցե՛ նեղափախորինը», մին ել, գիտեմ վոչ, ինչ «Լիցցե՛»։ Միտակ կրտորից տառեր եր կարել ու կարմրի վրա կրապըրբել։ Ենպես պարզ եր եղել վոր-ել արձար։ Տըղեքը շատ հավանեցին։ Իրան Վիկտորին ել մի քանի անգամ—«կեցցե՛, ասին, ընկեր Վիկտոր։ շատ լավ ե գուրս եկել...»։ Վիկտորը եղանքս բաների մեջ ամաչկու եր, յերբ իրան զովեշին՝ կը կարմրել... Ենպես ել ես անգամ—կարմրեց պուաի պես ու տղերանց թե՝ «Շատ մի խոսեք. խոսելու ժամանակը չի. ծալած տարեք, յես ել հիմի կը գամ»։ Տզաներից մինը ծալեց եղ կարմրի կարը, գրեց կրնատակը, ու գնացին։

— Եկ ուր են տանում, Վիկտոր, — հարցրի աղջկոս, յերբ աղեքը գնացին։

Նա թե՝ «Եսորվա տոնի համար պետք ե»։

Յես առաջի որը կարելիս բան չհարցըրի, կարծում եյի զրագարանի համար ե, վորովհետև մի յերկու անգամ ել, թագավորին քցելուց հետո, նու եղանքս բան կարեց զրագարանի համար։ Բայց

ես անգամ, յերբ տեսա աղեքը թագուն տարան, ուզեցի իմանալ բանն ինչումն ե. — ինչ տոն ե, տառմ եմ, Վիկտոր ջահ»։ Նա թե՝ «Եսոր մայսի մեկն ե», տառմ ե։

— Մայսի մեկը... Դա ինչ տոն ե, տառմ եմ։ — Ես գիտեմ Աստվածածնա տոն, Լուսավորչի տոն, Քառասուն մանկանց տոն, բայց եղ մայսի մեկը ինչ բան ա...»

Նա թե—մայսի մեկը, տառմ ե, բոլոր աշխատող, բանող մարդկանց տոնն ե։ Ես որը, տառմ ե, շատ նշանափոր տոն ե։ Աշխարհի բոլոր բանփոր, աշխատող մարդիկ եսոր ես տոնը կատարում են։ Հիմի բոլոր քաղաքներում, տառմ ե, Յեղրոպի կողմերը, Մերիկայում ես տոնը տոնում են եսոր։

— Ե՞ն, մեր Եջմիածնի որացուցում, տառմ եմ, եղ տոնը կա գրած։

— Եջմիածնի որացուցում ինչու պըտի ըլի, տառմ ե։ Վարդապետները իրանք ուրիշի աշխատանքը ուտող մարդիկ են, ինչու պըտի ես տոնը դրեն։ Նրանք, տառմ ե, իրանց չեղած, ուտ սրբերի տոնը կը գրեն, վոր ժողովրդին խարեն, խավար պահեն։

— Սուս, աղջի, տառմ եմ, — ջահել հոգուտ մեղք մի անի. «Ուտ սուրբը» գործն ե. Վարդապետները, ուրեմն, ենքան անխելք մարդիկ են,

վոր սուտ սրբերի անունը զրում են որացույցում:

— Զե, ասում ե, անխելք չեն—կեղծավոր են. զրում են վոր քեզ նմաններին խավար պահեն, վոր յեկեղեցի գնաք, մոմ վառեք, աշահամբույր տաք, իրենց ել սրբի տեղ գնեք: Թե չե, ասում ե, վոչ մի սուրբ չկա. բոլորն ել սուտ ե վարդեպեաների հնարածը:

— Բա ուրեմն, ասում եմ, աղջի, չխսութը, Մայրամ Աստվածածինը, Լուսավորիչը սուտ են:

— Հա, ասում ե,—բոլորն ել:

Յես շշմեցի:

— Զենդ կորի, աղջի, յերկնքից քարե կարկուտ կը թափիմի մեր գլխին: Մեղմ, մեղմ, տեր...

Յես վախեցած, սարսափած խաչակնքում եմ յերես, նա ծիծաղում ե:

— Խեղճ մայրէկ ջան, ասում ե, զուր մի չարչարդի, զուր ձեռներդ մի հոգնեցնի՝ խաչակնքելով: Վերի, ասում ե վոչ աստված կա, վոչ սուրբ: Մեր վերել՝ մենակ, ասում ե, չարչի վոճառական Միխակն ե իրա անամոթ կնկտ ու լիրք աղջկերանց հետ. ենտեղ՝ վերե ել բան չկա:

— Աղջի, ձենդ, ասում եմ,— կիմանան, տանից գուրս կանեն:

— Թող համարձակվե՞ն, ասում ե.— Շուտով ցույց կը տանը զրանց, թե ով ում զուրս կանի: Ու-

րիշի աշխատանքով շինած տանը նստել են . . . Խոսեց եսպես, շորերը հագավ ու գնաց: Բայց նրա ասածները սրտիս կպան, թե վերև վոչինչչկա, աստված չկա, սուրբ չկա, վարդապետները կեղծավոր են, եջմիածնի որացույցը սուտ ե զրել: Առաջ ել, մեկ-մեկ, եղպես բաներ եր խոսում—բանի տեղ չեյի դնում: «Զահել ե, ասում եմ, խելքին զոռ ե տպի». բայց ես անգամ ենպես բաներ ասավ վոր—ինձ դիպավ—բոլոր սրբերը սուտ են, Գրիգոր Լուսավորիչը սուտ ե... իմ հերը ասում եր, վոր Գրիգոր Լուսավորիչը բոլոր սրբերի մեծն ե, Քրիստոսից հետո, իսկ եջմիածնի ուկի ասուերով որացույցը, ասում եր, Աստվածաշնչի միջիցն են հաճում. հիմի—սուտ ե... Մեղմ քեզ, աստված, մեղմ, ասում եմ.— Զահել ե, ինելքից թեթև... կանգնեցի, մի քիչ աղոթեցի: Նետո ուղեցի մոմ առնեմ, զնամ ժամ՝ վառմ — փոշմանեցի: «Եսքան վառեցի, մտածում եմ, վոր Յերգանդիս հալեհնաս ըլի իր զժար տեղում — ինչ արավ, վոր հիմի ել վառեմ: Գրուստ ե ասում վիկորս, մտածում եմ.— յեթե նրանք՝ եղ սրբերը մի զորութին ունենային— Յերգանդս անուեր չեր կորչի ստար հողի մեջ... Յերգանդիս վոր հիշեցի՝ սիրտս վոնւ եկավ: Եսաեցի մի քիչ բաց եղա, հետո վեր կացա, ասի՝ մի զնամ տեմնեմ ինչ բան ե ես մայիսի տոնը.

տեսնեմ՝ ինչ տոն է դա, վոր Վիկտորը, նըս ծառնի տղեքը՝ եսպես թագուն պատրաստվում է յին, չեյին ուզում ուրիշները տեսնեն իրանց արածը, իսկ հիմի ուզում են դուքս գան վողոցում՝ կատարեն: Կամ ինչ տոն է, տառմ եմ, վոր յեկեղեցում, գլուխում չեն կատարում, ուզում են հենց անպատճառ վողոցում:

Մտածեցի ու զնացի:

Գնացի՝ տերա—մեծ վողոցը լիքը ժողովուրդ. մեր, մանուկ եղտեղ ե: Ասեղ քյես՝ զեախն չի ընկնի: Դեռ մի կողմից ել զալիս են, զալիս են... Որն ել լավ որ ե, անուշ, պայծառ—ձգածեղ: Մարդու սիրան իրան-իրան բացվում ե—ենքան լով ե որը: Մի կողմն ել մոզիկն ե ածում, երեխեքը խոզ են անում, յերգ են առում, ու եղպես ժողովրդի մեծ մասը կիրակի որվա շորեր հագած սպասում են: Յես ել դրանց հետ: Քիչ հետո տեսնենք հրես ուսումնարանի աշակերտները եկան իրանց մովովիլով: Զորուչորս կանգնած՝ եկան, անց կացան. նրանցից յեղը մի ուրիշ խումբ, ելի, ելի, ինչքան աշակերտ կար՝ եկավ-անցավ—ամեն մի խումբը իր դրոշակով, իր յերգով... Աշակերտներից հետո եկան ծառայողները՝ իրանց խաչփառի նման դրոշակներով, հետո զորքը՝ կանաչ, կարմիր, նարնջի գույնի մեծ-մեծ դրոշակներով, մուզի-

կով... Սրանք եկան անցան, նոր, գրանցից յեղը, յերեաց մի ֆուրգոն՝ դարբնի վուքն ու զնդանը վրեն. երկու մարդ ել, դարբնի պետ հագած՝ երկաթ են ծեծում—թախկ-թրախկ, թախկ-թրախկ: Մթամ բան ենք շինում: Ենպես ել խփում են վոր—տաք երկաթից կրակի պեծեր են թռչում... Դրանք ել անցան: Դրանցից յեղը մի ֆայտոն եկավ—մի աղջիկ միջին կանգնած. սիպտակ շորով, մաղերն ուսերին թափած՝ ծաղիկ ու կանաչ և շաղ ապլի չորս կողմը: Դա ել, ասին, մթամ մայիսն ե, ծաղիկ ու կանաչի ամիսը... Ինչեր չեն հնարում մարդիկ: Համար ել վոր անցավ—եկավ մի ուրիշ խումբ, ելի մի ուրիշը, վերջն ել մի խումբ՝ հենց են դրոշակով, վոր երեկ Վիկտորը կարել եր... Տառերից ճանանչեցի—սիպտակը կարմրի վրա: Դրոշակը կարել ելին մի փետի ու բարձր բռնել, ենակես վոր քամին ֆրֆրացնում, բացում եր, ու ամեն բան պարզ երեւում եր: Կողքիս մարդիկ կարդում են դրա վրան գրածները ու ծիծառում, կարդում են ու ծիծառում.

—Ընը. Ես ել բալշեիկները. երկու ջուխտ մի կենա...

Դրույտ վոր դրանք շատ չելին. մի քառառն-հիսուն հոգի. բոլորն ել մի-մի կարմիր լենք դոչներին կպցրած: Մինչև եղ Վիկտորիս

շեյի նկատել. դա ել տեսնեմ, դրանց մեջ. հենց  
դրոշակ տանողի կողքին։ Գլխին մի կարմիր շոր  
ե կապել, մազերը տակից կախել։ Մեծ մասը  
ջահել տղերք են, քիչ մասը՝ մազով միբուքով  
մարդիկ. դրանց մեջ ճանաչեցի վարժապետին,  
մեկ ել քաղաքի Յանառ վառողին։ Բոլորը տղա-  
մարդ, յերեք՝ աղջիկ։ Են յերկու աղջիկն ել,  
վիկառի պես, գլուխները կարմիր են կապել։  
Վիկառին դրանց մեջ տեսնելով՝ բարկացա ինձ  
ու ինձ. «Դու ի՞նչ ունես դրանց մեջ, այ աղջի»...

Դրանց տեսնելով խալին ել սկսեց խոսել.

- Կաղ իշով՝ քարվան են խառնվել։
- Շոր չեն գտել—կարմիր են կապել։
- Մարդ են զարմացնում։

Եսպես բաներ։ Մի քանիսը շվացնում են,  
հուշտ են անում, ինչ-վոր խոսքեր են ասում—  
չեմ հասկանում։ Բայց նրանք—հեշ։ Բանի տեղ  
չեն գնում, եկան-եկան ու մին ել, բոլորը, քառ-  
սուն-հիսուն հոգին միասին սկսեցին յերգել։

— Պահ, պահ, տեսնք, տեսէք Անտիրնացոլ  
են յերգում, —ասում են խալիսը ու ծիծաղում։

Իսկ նրանք—հեշ. վեջները չի. յերգում են։  
Հետո իմացա, վոր եղ Անտիրնացոլը հենց իրանց  
բալշեփելների յերդն ե եղել։

Սրանք վոր յերդը սկսեցին ու անցան,

Նրանց յետեկց յեկողները վեր կալան մի ուրիշ  
յերգ։ Եղ վոր յերգեցին, խալիսը թե՝

— Փափախներդ վեր կալեք։ «Մեր հայրե-  
նիքն» ե։ Ամբողջ խալիսը փափախները վեր կա-  
լան ու յերգողների հետ գնացին վակզար քանի  
վոր եկողը ենտեղ եր գնում։ Խալիսը պոկ եկավ  
գնաց, յես ել դրանց հետ։

— Ճառ են խոսելու, ասում եյին։

Ասի՞ քանի վոր տանից դուրս եմ եկել, ա-  
նելու ել բան չունեմ, գնամ տեսնեմ ի՞նչ են  
ասելու։ Կարելի յե մի սրտաշան բան են ասում  
—լսեմ։ Գնացի։ Վակզալի մոտ, բաց գաշտում,  
տեսնեմ, ենքան ժողովուրդ ե հավաքվել—ել դու  
պրծար։ Յես ասեմ։ Հազար, զու ասա՝ տասը,  
քան հազար։ Ավելի շատ, քանց թագավորին  
քցելու որը։ Միխակը, կնիկը աղջկերանց հետ  
եղանակ են։ Զուգված, զարդարված։ Աղջկերը  
զուսիկով, կնիկը՝ ըլապով։ Ինձ վոր տեսան՝  
զարմացան։

— Աննամ, զու ել ես եկել։ Բա վոր հայաթը  
թալանեն, ասում ե։

— Բան չի ըլի, ասում եմ, —հլա տեսնենք  
ի՞նչ բան ե սա։

Դրանք գնացին առաջ, յես մնացի։ Կանդ-  
նած թամաշ եմ անում, թե ի՞նչ ե ըլելու։

Եսպես—ժողովուրդը եկել-կիտվել ե ու մու-  
զիկը ածում ե մեջտեղը։ Ածեցին ենքան, մինչև

Վոր բոլոր ժողովուրդը հավաքվեց, նոր մինը—մի կրախարավ մարդ, ըստին ձեռին բարձրացավ ժողովրդի միջից: Խոկույն ճանաչեցի. տերտերի ասպարատ աղին եր—Վաղարշակը, են, վոր մի քանի տարի առաջ իմ տանտեր Միխակի հետ Յերգանդիս կամավոր գրեց: Վեր կացավ դա—ես կողմը նայեց, են կողմը նայեց, հազար ու սկսեց. «Ընկերներ, ասում ե, եսոր ամբողջ աշխարհը ես տոնը տոնում ե: Ես տոնը, ասում ե, են տոներից ե, վոր բոլորը տոնում են: Սա, ասում ե, աշխատող մարդկանց տոնն ե...»: Ու խոսեց, խոսեց: Բայց ենպես գրափառ եր խոսում, վոր խոսածի կիսից ավելին չելի հասկանում: Վերջն ել ըստին բարձրացրեց ու՝ «Կեցցե՛, ասում ե, մայիսի մեկը»:

Մուզիկը սկսեց ածել, մարդիկ փափախները վերցրին:

Դրանից հետո խոսեց մի ուրիշը—մի վարժապետ: Դա ել ենպես բաներ ասով, ինչ վոր աերտերի ասպարատ աղին—Վաղարշակը, ու նրա պես ել վերջացրեց.—«Կեցցե՛ մայիսի մեկը»: Վարժապետից հետո խոսեցին ուրիշ մարդիկ. վնար հանդարտ եր խոսում, վնար ձեռներն ու գլուխը թափ եր տալի գժվածի պես, գոռում, բայց բոլորն ել վերջացնում եյին իրար նման.—«Կեցցե՛ մայիսի մեկը»: Բոլորի ճառից հետո ել մուզիկը ածում եր, մարդիկ փափախ-

ները վերցնում եյին, ծափ տալի կամ ուռա կանչում: Խոսեցին եսպես մի հինգ-վեց հոգի, մին ել—ընը—ժողովրդի միջից խոսողների տեղը բարձրացավ... Վիկտորը՝ կարմիր շորը զդուխը կապած, կարոծ մազերը ուսերին կախած իրա կարած զրոշակը ձեռին... Դրան վոր տեսա եղագես—սիրոս տեղահան եղավ. «Վայ, մազդ կտրի աղջիկ, ասում եմ. —Ես ինչ խայտառակ բան ե: Դրա համար ես աղերանց հետ ընկելը, մտածում եմ: Մտածում եմ ու ամոթից ուզում եմ գետինը մտնեմ. աչքս չեմ կարում վեր բարձրացնեմ:

Դրան վոր տեսան, մարդիկ հարցրին իրար: — Ես ով ա, ես ինչ աղջիկ ա...

Մին ել թե՝

— Գրադարանի աղջիկն ա...

Դրանք խոսում են, յես ինձ ուսում եմ— «Քետինը մտնես, աղջի, աղջին ել եղագես բան եանի»... Ճոներս առկիս գողում են, սիրոս խալս ե եղել: Լեզուս բերնումն չորացավ: Մեռած եմ ու թաղոծ չեմ: «Վոր Միխակը տիսնի ինչ կասի», մտածում եմ...

Վերջը, ինչ յերկարացնեմ, դա կանգնեց դրոշակը ձեռին, կարմիր շորը գլուխը կապած, կանգնեց ու՝ «Ընկերներ, ասում ե, (ենպես ել համարձակ), վոր քիչ ե մնում գնամ մազերը պու-

կեմ). Են, ինչ վոր եստեղ խոսեցին, ասում ե, — եղ բոլորը կեղծ ե, վորովհետեւ, ասում ե, — խոսքով ուրիշ բան են ասում ես պարօնները (քանի գնում՝ եսպես համարձակ ե գառնում, իսկ յես ճաքում եմ), գործով ուրիշ բան են անում, ասում ե: Սրանք ասում են թե՝ բոլոր աշխատողները, բանվորները պետք ե միանան, բայց, ասում ե, իրանք չեն ուզում միանան ուսւ բանվորների, մի խոսքով ուսւ խալխի հետ, վոր կովում են, ասում ե, բոլոր մարդկանց բախտավորացներու համար: Սրանք, ասում ե, վոչ միայն չեն ուզում միանան նրանց, այլ մինչև անդամ, ողնում են նրանց թշնամիներին: Ու սրանք, ասում ե, ինչ վոր ասում են — սուտ են ասում: Թող մեր ժողովուրդն եղ բանը լավ իմանա: Սրանք մեր ժողովրդի թշնամիներն են, ասում ե:

Եսպես, ենպես... Խոսեց, խոսեց, ել բան չմնաց—ասափ:

Նա խոսում ե՝ յես ամոթից զետինն եմ ժոնում: Նա խոսում ե յես ինձ ուստում եմ: «Գետինը մտնես, աղջի. ինձ խաղք ու, խայտառակ արիր, մտածում եմ. — զու ինչ հոր վորդի ես, վոր եղանակ յեզու յես բանացնում. զու ինքդ աղջիկ՝ գուրս ես յեկել տղամարդկանց վեմ: Վայ անամոթ, բա քու յերեսի փարդեն պատուել ե

եղքան: Ել վոնց երեամ, մտածում եմ, յես մարդումիջի»...

Սուածի խոսողները՝ բոլոր տոնի մասին եյին խոսում, սա՝ ժողովրդի, կառավարութենի մասին:

«Են ինչ կառավարութին ե, ասում ե, — շարունակ կոխվ ե անում ու ժողովրդին ձնշում. Եսպես կառավարութինը, ասում ե, ավելի լավ ե չըլի»:

Ուրիշների ասածները պարզ չեյի հասկանում, բայց զրա խոսքերը շատ լավ եյի հասկանում. ամեն մի խոսքը վոնց վոր զրվանքա քարի պես զլխովս տան... Մին ասի՝ թողնեմ—գնամ տուն, մին ել թե՝ տեսնեմ հլա ի՞նչ պլատը ըլի սրա վերջը: Հանկարծ, մտածում եմ, չը բոնեն ու ծեծեն սրան, զերձակ Մակարի տղի պես, թե իսի ես մեր գեմը խոսում:

Նա խոսում ե—յես եսպես հալվում եմ կանգնած տեղս: Ինչքան խոսեց—չեմ կարա ասեմ, բայց վոր վերջացրեց՝ սրտից վոնց վոր մի քար քցես—թեթեացաւ: Սրան ծափ տվին միայն մի քանի մարդ, իսկ մուզիկը սկի ձեն չհանեց: Հետո մարդիկ սկսեցին զլվալ, գոռացին, ճշացին: Տոնը կարծես խանգարվեց: Յերբ դա խոսեց, ցած եկավ, ասի՝ մի գնամ թուք ու մուր տամ, բայց չկարացի ճամփա գտնեմ: Ամոթից Սո. Զորյան, Գրադ, աղջիկը—3.

Ել չմնացի: Ուղիղ եկա տուն: Վայ եմ տալի  
գլխիս ու մտածում, թե ես ինչ որի հասա յես,  
ես ինչ խայտառակություն եր. մինչև եսոր նա-  
մուսով ապրել ենք, հիմի ործերության մի  
մատը մեղք դառնամ քաղքի միջին...

Եսպես, տան առաջ նստած, մտածում եմ  
ինձ ու ինձ, մին ել տեսնեմ հրես Միխակն ու  
կնիկը՝ աղջկերանց հետ, յեկան: Զուգված, զար-  
դարված: Աղջիկերքը զոնափկով, կնիկը՝ շլապով:  
Միխակը զլուխս տեսավ թե չե՞

— Պարզերես կենաս, Աննա, — ասում ե, — լավ  
աղջիկ ես մեծացրել:

Ենտեղից կնիկը.

— Աղջիկ ել ասում ե... Նո աղջիկ չե՞  
կապը կըտրած զարաչի ասա:

Ու հետո ինձ.

— Աղջի, ասում ե, եդ վնաց եղավ, վոր  
քեզանից եդ ազգի դավաճանը ծնվեց:

Հերը, մերը խոսում են—աղջկերքը ծիծա-  
դում:

Ի՞նչ ասեմ: Ամոթից ելի գետինն եմ մտնում:  
Միխակը նորից.

— Եսորվա որը, ասում ե, աղջիկդ փչացրեց:  
Կնիկն ել թե.

— Եղպես աղջիկը չըլի, ավելի լավ ե. իբա  
անունն ել խայտառակեց, քունն ել...

Ամոթից ելի բան չեմ խոսում. յես ել մը-  
տածում եմ, վոր նրա արածը խայտառակու-  
թյուն եր: Մտածում եմ ու սիրտս քիչ ե մնում  
բերնովս դուրս գա: Վոր ձեռս ընկնի՝ բղիկ-  
բղիկ կանեմ, կըծատեմ: Թող մի գա, ասում  
եմ, տես նրան ինչ եմ անելու. շան լավը կը  
թափեմ գլխին, ենպես բան անեմ վոր—շունը  
ձեռիցը հաց չառնի: Դրա համար ե մազերը  
կտրել. դրա համար ե ասում աստված չկա,  
արբերը սուտ են...

Մտածում եմ եսպես ու տրորվում մինչե  
իբիկուն: Նոր իբիկունը միայն դա եկավ. ունդը  
թռած, հեալով տուն մտավ ու՝

— Մայրիկ, ասում ե, ես գիշեր յես տուն  
չեմ դալու. ինձ չսպասես:

Մտնելուն պես ուզում եյի հարձակվել դրա  
վրա, մազերը պոկել—դա եղպես խոսքե՞ր: Զար-  
մացա: «Ես ել մի նոր խայտառակություն»,  
մտածում եմ:

— Խի՞, աղջի, խի՞ չպիտի գաս:  
Թե՝ «ինձ ուզում են բոնեն»:  
— Ո՞վ:  
— Կառավարությունը:  
— Խի՞:  
Թե՝ «Եսորվա ճառիս համար»:  
— Այ, ասում եմ, աչքդ ել են հանելու»:

Շատ ել լավ կանեն: Դու ով—ճառ ասեն ով.  
Բնչ հոր վորդի ես, բնչ պաշտոնի տեր ես,  
վոր ճառ ես ասում: Դրա համար ես, ասում ես,  
ճաղերդ կտրել, ջահել տղերանցը խառնվէր...

Սկսեցի մի լվանամ դրան—դա, ունդը  
քյած, թե՝

— Շատ մի խոսի, մայրիկ ասում ե, —  
զլուխ չունեմ. դու բան չես հասկանում. յեւ  
գնում եմ:

— Ուր, աղջի:

Դա տեղը չի հայտնում:

— Մի տեղ, ասում ե:

— Վորամ՞ղ, բնչ տեղ:

Զի ասում:

Լաց, աղաչանք: «Խեղձ մորդ խնայիր, ա-  
սում եմ.—բա վոր ինձ ել բան չասես, ուժ  
պըտի ասես...»: Շատ վոր խնդրվեցի—«Դե, լավ,  
ասում ե կամաց, —մարդու բան չասես. յեւ  
գնում եմ հորքուրի տուն թագնվելու»:

Այսինքն տալիս տուն: Տալս ել ապրում ե  
քաղաքի մի ծերում, հեռու, վակզալի կողմը:

— Մինչև յերբ, աղջի:

Թե՝ «Տեսնենք»:

Խոսում ե ու, հետն ել, թղթեր, նամակներ  
գրքեր հավաքում: Հավաքեց, հավաքեց, կապոց  
որավ, բարակ պալտոն վերցրեց ու գնաց: Ել

սիրտ չարի բան ասեմ: Ռանգն ենպես եր քցել,  
վոնց վոր պատի ծեփի: Եղան ժամանակ ել ով  
կարա բան ասի. մեր չե, թեկուղ ոտար ըլի:  
Ռւզեցի տանեմ մինչեւ տալիս տուն, ճամփու  
քցեմ—չթողեց:

— Հարկավոր չի, մայրիկ ջան, ասում ե,—  
դու տանից սկի դուրս մի գալ. քեզ վոր ինձ  
հետ տեսնեն—լավ չի:

Ու զնաց: Բայց իմ սիրտը չհամբերեց:  
Դուրս եկա զրա յետեկից ու գնացի մինչեւ հայա-  
թի դուռը:

Գիշերը մութ-մութն ե. սիրտս ել զի-  
շերկա պես: Մին բարկանում եմ զրա վրա, ու-  
զում եմ յետեկից անիծեմ, մին ել խղճում եմ  
խեղձ աղջկան:

«Ճեր աստված, ասում եմ,—դու խնայես  
իմ կորած, մոլորած զավակին...»:

### 3.

Եսպէս... Վիկտորի զնալուց հետո մի ժամ  
եր անցել, յերկու, հինգ—չեմ իմանում. Մի-  
խակը, կնիկը վերև քնել եյին արդեն, յես ել  
տեղս մտած կուչ եմ եկել՝ աչքս անխուփ, սիր-  
ուրս անհանգիստ, մին ել—ըհը՝ վոտների ձեն:  
Սանդուղով իջան իմ բարկոնը ու դուռս ծեծե-

ցիս: Մին մտածեցի թե, շատ կարելի յե, Վիկուարն ե, փոշմանել ե կամ իմացել ե բան չկա՞րևնկերների հետ յետ ե եկել: Բայց տեսնում եմ—չե: Դուռը ենպես են ծեծում, վոր սկի Վիկուարիս ծեծելուն նման չի: Նա վոր ծեծում եր՝ միշտ մատի ծերով եր ծեծում—մի, երկու անգամ, հետո ել՝ «մայրիկ»: Ե՞ն, յես ել ենքան խոր քնող չեմ, լսում եյի իսկույն: Իսկ ես անգամ վոչ թե մատով ծեծեցին—վոտով, սապոզով «թրը՛խկ-թրը՛խկ...»: Սիրտս ահ ընկափ: Ո՞վ պատրի, մտածում եմ, եսպես ուշ, զիշերպա կեսին:

- Ո՞վ ե, հարցնում եմ:
- Բաց արա, ասում են:

Տղամարդու անծանոթ ձեն ե:

Վեր կացա, շորերս հագա ու գնացի դեպի դուռը:

- Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում, ասում եմ:
- Մենք ենք, միլիցիան, բաց արա:

Լսում եմ խոսողը մինը չի. շատվոր են. դրան յետեր զովում են: Սիրտս ավելի ահ ընկափ: Մին մտածեցի թե՝ Վիկուարի համար են յեկել, մին ել թե՝ ով ե իմանում, զող մարդիկ են զուցե, թալանի յեն եկել: Եղ որերին ել եղպես բաներ շատ եյին ըլում. եղպես խաբերով շատ աներ եյին կարում: Մարդիկ կային հենց երանով եյին պարապած: Թանի՛քանի՛ մարդ

թալանեցին վակզալի ճամփին, քանիսին քաղաքում:

— Ի՞նչ եք ուզում, ասում եմ.—տանը մարդ չկա:

— Բաց արա, կիմանաս, ասում են, ի՞նչ ենք ուզում.

Յես կողքիս եմ ընկել: Ես կես զիշերին յես չեմ կարող դուռը բաց անել:

— Չեմ կարա, ասում եմ,—մենակ, անտեր կնիկ եմ, ի՞նչ եք ուզում ինձանից:

Իսկ նրանք դուռը են.

— Հերիք ե, ասում են,— բաց արա, թե չե՞ կը ջարդենք:

Եղ ժամանակ լսեցի, թե ինչպես խարփա Միխակը զարթնեց վերև—հազար ու սկսեց ման զալ: Եղ վոր տեսա—սիրտ արի: Նա զարթուն ե, մտածում եմ, յեթե յեկողները զող ըլեն, ձենս կիմանա: Ու բաց արի: Ներս թափվեցին հինգ-վեց մարդ՝ թվանքով, բանով:

— Վիկանոր Դանելյանցն ով ե, հարցնում են:

— Իմ աղջիկն ե, ասում եմ, բայց եստեղ չի:

— Ո՞ւր ե հապա:

— Զգիտեմ, ասում եմ, իրիկունը գնացել ե, դեռ տուն չի եկել:

— Ո՞ւր ե զնացել:

— Զգիտեմ:

— Վո՞նց չգիտես, ասում ե դրանց մեծը աչքերը վրես չուելով.—քու աղջիկն ե, պարտավոր ես իմանալ ուր ե գնում։ Դու գիտես, ասում ե, նա ուր ե, ասա։

Կակել են, թե աղջկանդ տեղը ասա, թե չե բանը վատ կըլի։ Յես ել՝ «Զգիտեմ, ասում եմ, ինչ իմանամ ուր ե գնացել»։ Նրանք թե՝ «Շատ լավ գիտես, բայց չես ասում»։ Յերդվում եմ—յերկինք, գետինք, «առեք-կերեքը» վկա, չգիտեմ։ Զեն հավատում։

— Անկարելի բան ե, ասում են, դու քու աղջկա տեղը չիմանաս։

— Այ քեզ բան, ասում եմ։ — Զգիտեմ։

Ասում եմ, բայց սիրտս դողում ե։ Մենակ կնիկ՝ հինգ-վեց հոգու առաջ կանգնած։ Ինձ կորցրել եմ։ Եղ ժամանակ տեսնեմ—Միխակը՝ պալտոն շապկի վրա հագած, անգուլպա, չուստերով մտավ ներս։ «Ի՞նչ կա», հարցրեց միլիցիային։ Նրանք թե՝ «Վիկտորիա Դանելյանցին ենք ուզում»։

Վոր Միխակը երևաց, սիրտս մի քիչ պընդեց։ Ասի՝ սրանից կը քաշվեն, կամաչեն—կը հեռանան։ Բայց—չե։ Տեսան աղջկանս տեղը չեմ ասում, սկսեցին տունս խուզարկել։ Ել տեղ, ծակ ու ծուկ չթողին՝ ման եկան։ Ել սնդուկ, քսուր-ծրուր չթողին՝ քրքրեցին։ Մինչեւ անգամ

մեկ-մեկ կուացան տախտերի տակը նայեցին։ Մի խոսքով՝ տունս աղեցին-մաղեցին—աղջիկ չգտան։ Վերջը տեսան բան չկա—Վիկտորի զըրյանքը հավաքեցին, տարան։ Գրեցին մի թղթի վրա, թե տանում ենք տամնուհինդ հատ գիրք։ Թուղթը Միխակին ել ստորագրել տվին ու տվին ինձ։

— Տեսար, Աննա, ասավ Միխակը նրանց գնալուց հետո։ — Տեսար, վոր ասում եյի աղջկանդ ջիլավը քաշի՝ եսորվա համար եյի ասում։

— Դրուստ ես ասում, խալի՛, շատ դրուստ ես ասում,—ասում եմ։ — Բա հիմի վո՞նց անենք, վոր երեխիս չբոնեն։ աղջիկ ե, սիրտը բարակ, սրտաճաք կըլի։

— Ել հիմի ուշ ե, ասում ե։ — Եսորվա ճափից հետո ել նրան չենք կարող ոգնել։

Ասավ ու գնաց։ Մինչեւ առավոտ թե դուք իմ տանը աչք եք կպցրել—յես ել ենպես։ Քանդած բաները սկսեցի տեղավորել ու, մինչեւ լուս, տունս զորով կարգի բերի։ Առավոտը հարևաններս թափվեցին զլիխիս։ Իմացել եյին գիշերը տունս միլիցիա յե եկել, իրար յետեխից գալիս եյին հարց ու փորձի—«Ի՞նչ արին, ինչ չարին...»։ Դրանց հետ յեկավ մի ծանոթ կնիկ, վոր ապրում եր հարևանի հայաթում։ Դա մի կարճ, կտ-

պույտ աչքերով կնիկ եր—անունը Յուղաբեր  
Նստում եր միշտ իրենց դարպասի դրան—գուլ-  
պա եր անում կամ սեմոջկա չըթում։ Քաղա-  
քում չոփը չոփովը դիպչեր՝ կիմանար։ Մեկ-մեկ  
ել գալիս եր ինձ հետ զրից անում։ Դա, վոր  
իմացավ տունս խուզարկել են, Վիկտորին ման-  
են գալի, —շատ ցավեց, —«Վոյ քոռանամ յես...»։  
Հետո ել պատմեց, վոր քաղքում մարդիկ են  
բոնում։ Բալշեիկություն սարքողներին։

— Վիկտորիդ, ասում ե, լավ պահիր, թե  
չե կը բռնեն. աղջիկ ե, ամոթ ե բանտ տանեն։  
Յեթե, ասում ե, լավ տեղ չի, յես տեղ ունեմ  
պահենք...

Ենպես մի լեզու բանացրեց վոր, ասի-  
սրանից սրտացավ մարդ չկա։

— Զե, ասում եմ, չնորհակալ եմ։ Վիկտորը  
լավ տեղ ե։

— Վորտեղ ե, ասում ե, ապահով տեղ ե։  
Յես ել, վայ ինձ, միամիտ-շաշ։

— Վոչինչ, ասում եմ, իրա հորքուրի մոտ։  
Լավ տեղ ե, վակզալի կողմը։

— Հա, առավ դա ու պառշներին հուզ տը-  
վեց մի ուրիշ տեսակ։ Դա վոր պառշներին հուզ  
տվեց, յես ասածս փոշմանեցի, թե՝ ինչու ասի-  
տիր, մտածում եմ. —Սա ել կերթա հանկարծ-  
ուրիշի ականջը կըքցի։ Բայց ել ինչ կարող ելլու

անել։ Ասած խոսքն ու ծնված երեխեն մեկ են—  
պիտի ճվան։

Եղակես ել եղակ։

Երկու որ հետո Վիկտորին բռնեցին հոր-  
քուրի տանը, բռնեցին իրա թղթերը հետը։ Գրլ-  
խիս վայ տվի ու մտածում եմ, թե վոնց իմա-  
ցան տեղը, վոնց չիմացան։ Մտածում եմ ու  
գնում եղ կնկա մոտը։ «Աղջկանս բռնել են, ա-  
սում եմ. —Քեզանից սավայի մարդ չգիտեր  
նրա տեղը, չըլի՛, ասում եմ, բերանիցդ խոսք ես  
թոցրել»։ Նա թե՝ «Զե»։ Բայց տեմնում եմ  
կարմրում ե ու աչքերը փախցնում ինձանից։ Հետո  
իմացա, վոր զրա ախպերը բագուն միլիցա յե-  
րան զրկել են ինձանից բան դուրս քաշելու։ Իմա-  
ցել ե ու... Վայ տվի զլիխիս, ինքս ինձ նախա-  
տեցի, վոր պատճառ յեղա իմ աղջկա բռնելուն։  
Բայց ել ինչ կարող եյի անել։ Բանը բանից  
անցել եր։ Հիմի մնում եր մի բան—մտածեցի,  
թե վոնց անեմ, վոր նրան աղատեն։

Գնացի, ամենից առաջ, բանտը, տեսնեմ  
ինչպես ե, ինչ են արել։ Ասում եյին, վոր բռո-  
նածներին ծեծում են։ «Աղջիկ ե, ասում եմ,  
վախից սիրտը կը պատփի, գնամ մի տեսնեմ»։  
Բանտումն ասին, թե՝ Վիկտորիա Դանելյանցը  
եստեղ չի. շատ կարելի յե մյուս բռնավորների  
հետ հին դպրոցումն ե։ Բանի վոր բանտը լիքն

Եր բոնավորներով, նոր բոնածներին տարել եյին  
դպրոցում բանտարկել: Գնացի դպրոց:  
— Վիկտորիա Դանելյանցը եստեղ ե:  
— Եստեղ ե:  
— Կարելի յե տեսնել:  
— Չի կարելի:  
— Յես նրա մերն եմ, ասում եմ:  
— Միևնույն ե. թեկուզ աստված ըլես, ա-  
սում ե. — Չի կարելի: Պետք ե նսինչից թուղթ  
բերես, վոր թողնենք:

Գնացի եղ ինչի մոտ: Խնդրեցի, աղաչեցի—  
մի թուղթ տվեց, թե՝ Անսա Դանելյանցին թույլ  
տվեք իր աղջիկ Վիկտորա Դանելյանցին տեսնի:  
Թուղթը կարդացին՝ թողին: Տարան կարիզոր,  
հետո Վիկտորին կանչեցին: Եկավ գա՝ պալտոն  
ուսերին քցած, կարած մազերը թափ տալով.  
կարծես հէչ—իրան չեն բոնել ինձ են բոնել:  
Եկավ՝ դարառով հետը: Հեռվից ինձ տեսավ թե  
չե. «Մայրիկ, դռն ես», ասում ե: Ենպես ե խո-  
սում, վոնց վոր, կարծես, իրանց տանն ե: Ու-  
զեցի դրան մի լավ շշպրտեմ, նախատեմ,—դա-  
րառովից քաշվեցի, բայց ելի չկարացի ինձ պա-  
հեմ.

— Աղջի, ասում եմ,—բա ես բան Եր քու  
արածը:

— Մայրիկ, ասում ե ավել պակաս մի խո-

սի. ինչ վոր ասելու ես, ասա առանց ավելորդ  
խոսքերի:

Ենպես ել հանգիստ ե խոսում վոր—պատ-  
ռում եմ: Ասա՝ սկի վեջն ե քցում, թե բոնված  
եմ, վատ բան եմ արել, թե աղջիկ եմ, խայ-  
տառակվել եմ քաղաքում: Սկի:

— Բա հիմի ինչ անեմ, աղջի, վոր քեզ  
ազատեն: Ում խնդրեմ:

— Վոչ մի մարդու, ասում ե:

«Գժվել ե ես աղջիկը, մտածում եմ,—խնդրը  
յետ ե ավել, ինչ ե»:

— Գնամ, ասում եմ, Միկակին խնդրեմ  
թող մի բան անի:

— Չե, ասում ե, վոչ մի Միկակ: Ավելի լավ  
ե յես եստեղ մնամ տասը տարի, քան թե նրա  
բանով ազատվեմ:

— Ինչի, աղջի. Միկակը քեզ ինչ ե արել:  
Թե՝ Միկակը մեր թշնամին ե: Եսպես, են-  
պես: Տակից զլխից խոսում ե, դարառով ել լսում  
ե: Աչքով-ունքով եմ անում, թե՝ աղջի, կապդ  
քաշի: Հէչ: Թե նրան տած, թե ես պատին:  
Վերջը՝

— Միևնույն, ասում եմ, քեզ հո չեմ թող-  
նի եստեղ մնաս ուրիշ ծանոթ մարդ չունեմ եղ  
գործերի մեջ—Միկակն ե, պետք ե նրան խըն-  
դըմքեմ:

— Զե, ասում ե, յեթե նրա խոսքով ինձ  
աղատեն, յես ելի բանտը կըդամ...

Շատ ել դա չեր ուզում, բայց յես բան-  
տից դուրս յեկա թե չե՝ գնացի Միխակի մոտը:  
Եսպես-եսպէս: Վերև աստված, ներքի դու,  
խարիս. մի բան արա, աղջիկս ազատիր: Նա թե՝  
«Դա իմ բանը չի. գնա կամիսարի մոտ»: Գըլ-  
խիցը հեռացըց: Յես կամիսարի մոտ չգնացի—  
ծանոթ չեր: Առաջ հլա մի գնամ, ասի, ենպես  
մարդկանց մոտ, վոր եղ գործերի, կոմիտեքի  
մեջ են, կամիսարին ծանոթ են, աղջկանս ել  
գիտեն: Միխակից յեղը գնացի Վիկտորի վար-  
ժապետի մոտ: Են, վոր մեկ-մեկ գրադարանում  
հետը վիճում եր: Նա ել թե՝ «Զեմ կարող, դա  
կամիսարի գործն ե»: Մեկ ել թե՝

— Բու աղջիկը ենպես բան ե արել, ասում  
ե, վոր չեմ կարող միջնորդել:

— Ինչ անենք, ասում եմ, ջահելութին ե,  
չի հասկացել:

— Զե, ասում ե, շատ լավ հասկանում ե:  
Քու աղջիկը աղգի դավաճան ե, ասում ե: Ու-  
զում ե՝ ուստ բայլշեկիներին բերեն՝ մեր յերկի-  
րը բանդին:

Տեսա դրանից ել խեր չկա, գնացի տերտե-  
րի կուշտը: Մեր մահի կնանիք խորհուրդ տվին,  
թե՝ գնա տեր-Բարսեղի մոտ: Նա ել եղ գործե-

թի, կոմիտեքի մեջ եր մի ժամանակ: Ինքն ել  
մեր ծխատերն եր: Գնացի: Դա ել են պատաս-  
խանը տվեց, ինչ վոր վարժապետը, թե՝ աղջիկի  
աղգի դավաճան ե, յես բան չեմ կարա անի:

— Տերտեր, կարգիդ դուրբան տերտեր, կը-  
ուանամ վոտդ կը համբուրեմ, կը բարձրանամ  
ձեռդ, մի բան արա...

Դա ձեռները կապայի ջերերը գրած՝ գնում-  
գալիս ե բալկոնում, յես նրա յետեից: Յես  
խնդրում, աղաչում եմ—նա՝ չե վոր չե...

— Գնա, ասում ե, կամիսարի մոտ. թե կա-  
զատի, թող ազատի...

Փոր ու փոշման գնացի եղտեղից կամիսա-  
րի մոտ: Մի քանի ոթախ անցա, նոր մտա են  
մեծ ոթախը, ուը, տեսնեմ, կնիկ, մարդ հավաք-  
ված, աթոռներին նստած՝ սպասում են: Յես ել  
նստեցի մինչև իմ հերթը դա: Նստեցի ու ական-  
ջըս կախ արած լուսմ եմ ինչ են խոսում: Եղ-  
տեղ, նստածների մեջ կային ենպեսները, վորի  
կամ տղեն եր բռնված, կամ աղջիկը, կամ մար-  
դը: Պատմում եյին, վոր քաղաքում հիսուն-վաթ-  
ուուն բալկիկ են բռնել: Վորին ել վոր չեն կա-  
րացել բռնի-նրա նորը, ախպորը կամ կնկան  
են բռնել: Նրանց տներն ել խուզարկել են իմ  
տան պես: Ինչու: Թե՝ մայիսի տոնի որը նրանք  
իրանց վատ են պահել—հայհոյել են կառավա-

բության մարդկանց, չեն հավանել նրանց ունրանց գործերը: Եսպես բաներ... Նստել եմ եղտեղ մենակ ու մտածում եմ: Մին ել՝ մի սկ շուրեք հագած կնիկ մոտենում ե ինձ.

— Դու յես Վիկտոր Գանելյանցի մերը, ասում ե:

— Յես եմ: Ի՞նչ կա:

Նայում եմ դրան—տեսնեմ լաց եղած եաչքերը թաց են:

— Բա ըսենց ողբաթ կը լինե՞ր, ասում ե, վոր քու աղջիկը բերեց իմ գլուխը:

Ու լաց ե ըլում: Արցուքներն ել աչքերից թափվում են: Յես բան չհասկացա:

— Ի՞նչ ողբաթ, ասում եմ:

— Աղջիկդ, ասում ե, ենքան արգելված գիրք տվեց՝ Աշխենիս գլխահան արագ: Հիմի բռնել են ու, ասում ե, — ով ե պատասխանատուր:

Ասում ե ու լաց ըլում: Զեռի աղլուխով աչքերը սրբում ե ու լաց ըլում:

— Եղ մի աղջիկն ունեմ, ասում ե, — եղ ել եղագեա:

— Այ քուր ջան, ասում եմ, յես ի՞նչ անեմ: Յես կուզեյի՞ վոր եղագես ըլեր:

Նա թե՝

— Զե. Քու աղջիկն ե մեղավոր: Իմ անմեղ երեխին գլխահան արագ, ասում ե. — Են-

քան գիրք ավեց, ժողով կանչեց վոր, խաթի մեջ քցեց...

Բարձր խոսում ե ու լաց ըլում ելի:

Շատ վոր խոսեց, վեր կալա թե՝

— Յես ի՞նչ անեմ. թող քու աղջիկը, ասում եմ, յեթե խելք ուներ, չխարվեր, թող աված գիրքը չկերցներ:

Եղ ժամանակ մի ուրիշ կնիկ են կողմից.

— Քու աղջիկն, ասում ե, շատ ե մեղավոր: Վճնց չկերցնեյին. Նա ոձը ծակից կը հաներ, ենպէս լեզու ուներ: Բոլորն ել խարվում եյին, Գրադարանը բռն եր շինել, ասում ե, ու սրան-նրան թալակ քցում: Իմ տղեն ել նրա յերեսից բռնվեց. քու աղջկա յերեսից...

Դրանից հետո մոտեցավ մի կնիկ ել, հետո մի ուրիշը: Չորս-հինգ հոգով կանգնել են առաջու ու բռունցքները թափ են տալի վրես.

— Եղ ի՞նչ մեր ես դու:

— Եղ ի՞նչ աղջիկ ես խրատել:

— Եղ ի՞նչ տեսիլք աղջիկ ե:

— Հողեմ գլուխը. ցխեմ գլուխը:

— Նրան կախելն ել քիչ ե: Մեր երեխանցը կլսահան արագ:

Կանգնել են առաջիս, խոսում են, ձեռ են թափ տալի, հեկեկում են, լաց ըլում: Յես ել առաջներին չորացել եմ, վետ դառել: Թողում նա, Չորյան, Գրադ, աղջիկը — 4.

չեն մի խոսք ասեմ։ Իրանց սըտի կատաղությունը թափում են գլխիս ու թուք ու մուր տալի։

— Մենք հիմի, ասում ե, կամիսարին ել պըտի ասենք, վոր քու աղջիկն ե մեղավոր, վոր մեր երեխանցը նա ե ճամբից հանել։

Եղ ել վոր ասին՝ չհամբերեցի։

— Խի՞, ասում եմ, ձեր երեխանց գլխին խելք չկմ։ Շաշ են, վոր նրան լսեցին, ճամփից դուրս եկան։

— Քու անզգամ աղջիկը գրավեց, ասում են։ — Գրավեց իրա լեզվով։

Դրանք եղած խոսում են կատաղած՝ յես ինձ ուտում եմ. «Վիկտոր աղջիկ, մտածում եմ, մի ձեռս ընկնես ես րոպեյին, տես քեզ ինչ եմ անում»։

Վերջը. Դրանք վոր շատ դալմաղալ արին, մի ծառայող տղա մոտեցավ թե՝

— Զեններդ կտրեցեք։ Աղմուկ չըլի։

Դրանք նոր սուս կացան։ Հերթով գնացին կամիսարի մոտ. գնացին՝ դուրս եկան, գնացին՝ դուրս եկան։ Իմ հերթն ել վոր եկավ, մի տղա մոտեցավ թե՝

— Քու, մայրիկ, զուր մի գնա։ Քու խնդեր կամիսարը չի լսի, միենույն ե։

— Ինչի, ասում եմ։

— Նրա համար վոր, ասում ե, քու աղջիկը հայսնի յե։ Են որվա ճառը նրա տունը քանդեց։ Մոտը թղթեր են գտել. նա ել չի կարող արդարանալ։

Ինչ կըլի-կըլի, մտածեցի, պետք ե գնամ իմանամ պատճառն ի՞նչ ե։ Կը խնդրվեմ, վոր ջահելություն ե արել, թող ների. կըխոստանամ, վոր ել եղած բան չի անի. գուցե սիրաը գութքցեմ—երեխիս ազատեմ։ Մտածեցի ու գնացի ներս մտա։ Սեղանի մոտ նստած եր մի ջահել տղա՝ բեխերը վոլորած, մազերը թողած։ Առաջին թանաքամաններ, թղթեր, գրյանք ու մի հաշվի չուրկ։ Դա ինքը կամիսարն եր. դրա կողքին ել նստած ե տերտերի աղվակատ տղեն—Վաղարշակը, են որվա ճառ խոսողը, ելի իրա կրախմալով, բանով, ակնոցը աչքերին։ Մոտեցա դրանց ձեռներս դոշիս ու գլուխ տվի։ Յերկուսն ել վոտից գլուխ նայեցին ինձ։

— Ի՞նչ կա, ասում ե կամիսարը։

— Եկել եմ, պարոն կամիսար, ասում եմ, աղջկանս համար։

— Ի՞նչ աղջիկ, ով ե քու աղջիկը։

— Երեկ բռնեցին, ասում եմ. — Տղիս կամավոր գրեցին՝ կովում մեռավ, եղ մի աղջիկն ե մնացել, ասում եմ, դրան ել բռնեցիք, յես ի՞նչ անեմ։

— Ո՞վ ե քու աղջիկը, հարցնում ե. — Ազգանունը ասա:

— Դրադարանի աղջիկն ե, ասում եմ, — Վիկտոր Դանելյանցը:

Դա տերտերի տղա աղվակատին նայեց, «Հըմ» արավ ու քթի տակ ծիծաղեց:

— Նա քու աղջիկն ե, ասում ե. — Հիմիքնչ ես ուզում վոր, — հարցրեց խիստ փոխված ձայնով:

— Կը խնդրեցի վոր — աղատեք: Աղջիկ ե, ասում եմ, մի բան կը պատահի: Յես եմ ու եղ աղջիկը: Զահել ե, սխալվել ե...

— Հըմ, ասում ե, ինչպես չե. սխալվել ե...

Ասում ե ու աղվակատին նայում:

Աղվակատն ել բեխի տակ ծիծաղում ե իրան-իրան:

Դա վոր շատ ծիծաղեց՝ ինձ չկարացի պահեմ:

— Դու խի ես ծիծաղում, ասում եմ. — Միխակի հետ վորդուս կամավոր զրեցիք — մեռավ, հիմիք ել սրան եք ուզում մեռցնեք:

Աղվակատը ոսնդր քցեց. տաքացավ.

— Մեկը մյուսի հետ կապ չունի, ասում ե ակնոցը քթին տմբտմբացնելով:

— Վհնց չունի, ասում եմ, — Հօ վոր յեր-

կուսն ել իմ երեխեքն են, երկուսին ել յես եմ բերել-մեծացրել:

— Դա նշանակություն չունի, ասում ե ելի ակնոցը տմբտմբացնելով. — Վոչ մի կապ չկանքար, վորովհետև մեկը՝ տղեդ հայրենիքը սիրում եր, գնաց նրա համար կովելու, մյուսը, ասում ե, աղջիկդ միացել ե մեր հայրենիքի, Հայաստանի դավաճաններին:

Խոսեց եսպես զրափառ ու վեր կացավ:

Յես բարկացա.

— Իմ վորդին, ասում եմ, առաջինը՝ իրակամքով չգնաց, զուք զոռով զրեցիք, զրկեցիք: Խոստացաք ինձ ողնել — վոչ մի կոպեկ՝ ել չը տվիք: Սա ել, ասում եմ, ինչ դավաճան. Զահելություն արավ մի ճառ ասավ, զրա համար պետք ե բռնեք:

— Ի՞նչ ճառ, ասում ե, — մենակ ճառը չի: Քու աղջիկը բալշեկների հետ կապ ունի: Գազանի, ասում ե, նրանցից փող ու թղթեր ե ստացել, վոր մեր տերությանը վնասի:

— Վայ քոռանամ յես, ասում եմ, — եղպես բան չկա: Յես նրա ձեռին փող չեմ տեսել իրառութիւնց պավայի: Են ել ստացել՝ միշտ տվել ե ինձ: Իմ աղջիկն անմեղ ե, ասում եմ, նրա վրա շառ են քցում:

Կամիսարն ենտեղից.

— Ի՞նչ շառ, ասում ե.—բոլորն ել քու աղջկանն են մեղադրում, վոր իրենց ջահելներին գլխահան ե արել, թու աղջիկը, ասում ե, վոչ թե անմեղ ե. քու աղջիկը... լիրի ե, ասում ե:

Լիրը... Վոնց վոր քարով գլխիս խփեն: Շըշմեցի: Աչքերս շաղկեցին. գլուխս քիչ մնաց պըտուա գա: Լիրը... իմ խեղճ աղջկան եղ եր պակաս: Առանց յերկար մտածելու, թե վարտեղ եմ, ում հետ եմ խոսում,—տարա ու բերի.

— Լիրը դուք եք, ասում եմ.—ինչպես եք համարձակվում իմ անմեղ աղջկանը լիրի ասել:

Յես վոր ձենս բարձրացրի—կամիսարը զանգը տվեց:

Ներս մտավ մի գյաղա:

— Դուրս տարեք սրան, ասում ե, եստեղից. Դուրս տարեք անզգամին:

#### 4.

Եղ որվանից հույսս կտրեցի ամեն կողմից. մնաց միայն աստված: Դրա վրա ել, վորդուս սպանվելուց հետո, հավատ չունեյի. բայց ելի հույս եր: Վորդուս չվողորմած, մտածում եմ, իցե թե աղջկանս վողորմա: Ամեն որ բանտ եյի գնում, կերակուր եյի տանում, մեկ-մեկ ել վիկ գնում, համար փոխնորդ: Զեռս ու վոտս ել բանտորիս համար փոխնորդ:

Հեր բոնում. գործից ել զրկվեցի, բանից ել: Ովսիրտ ուներ գնա սրա-նրա լվացքը անի: Ուր ել գնում եյի—հենց մի գլուխ են եյին ասում, թե ի՞նչ աղջիկ ես մեծացրել, վոր եղպես ազգի խայտառակիչ գուրս եկավ: Թագուն փողեր ե ստացել, վոր հայաստանը քանդի. ել ինչեր, ինչեր... Շատ քիչ մարդ կար, վոր ցավում եր ինձ: Բայց նա ել, ով ցավում եր—չեր կարում սիրալ բաց խոսի: Կային ենպեսներն ել, վոր ինձ հետ չեյին ուզում խոսել, թե եսպես աղջկամեր ե...

Քանի վոր գործ չեյն անում ձեռիս փողը կամաց կամաց հասնում եր: Մի որ ել հիշեցի, վոր Վիկտորը գրադարանի ոռճիկը, վերջի ամսվա համար, չի ստացել: Ասի գնամ ստանամ. իրա համար զոնյա ճաշի փող կըլի, վոր մի քիչ կարգին հաց, բան տանեմ բանտ: Մարդամեջ եմ տանում, մտածում եմ, ամոթ ե: Տանը Վիկտորը ցամաք հացով յոլա եր գնում—բանառում ի՞նչ աներ: Մտածեցի ու գնացի:

— Նա բան չունի ստանալու, ասում ե կառավարիչը:

— Զե վոր, ասում եմ, անցած ամսի ոռճիկը չի ստացել:

— Միենույն ե, ասում ե, կարգադրված ե չտուլ...

Չտվին։ Ելի սկսեցի թեթև բաներ տանել։  
մի որ կարտու, մի որ աղցան, լորի, մի քանի  
անգամ ել կատեա տարա։ Ինչ վոր տանում եյի  
մեղքս ինչ թագցնեմ, յես կարծում եյի վիկտո-  
րի ձեռքը չի հասնում, հենց իրանք բանտի  
մարդիկ են ուտում։ Քանի վոր աչքս չեր տես-  
նում—եղակս եյի մտածում։ Բայց հետո իմա-  
ցա, վոր ինչ վոր տարել եմ, տվել են իրան։

Մի որ ել եղակս գնացի բանտ, տեսնեմ  
հրես մեծ բազմություն ե հավաքվել բանտի տ-  
ուաջ։ Հավաքվել նայում են ներս, նայում են  
բանտի պատերին, իսկ եղակ փողոցում թափ-  
ված են ամեն տեսակ բաներ—հաց, պանիր,  
կոտրած չաշխաներ, ամաններ, մսի կտորտանք։  
Մի քանի գաղթական կնիկ հավաքում են թափ-  
ված բաները, գոզները լցնում, մնացած մարդիկ  
քամաց են անում։ Ու բանտի զարաւիները ինչ-  
քան ասում են դրանց՝ «գնացեք, հեռացեք»—  
ժամ չեն գալի։ Բանտի մեջ ել ինչ-վոր զարմա-  
զալ կա։ Դես նայեցի, դեն նայեցի՝ բան չհասկա-  
ցա։ Նոր հարցնում եմ։

— Ես ինչ բան ե, ասում եմ, ես բաներն  
ով ե թափել։

— Բոնավոր բալշեկիկները, ասում են։

— Ինչու են թափել։

Մինը թե՝

— Գժվել են, դրա համար։  
Մի ուրիշն ել թե՝

— Եսոր մեկին ծեծել են բանտում, դրա  
համար բերած ուտելիքը թափել են փողոց։ Զեն  
ուզում ուտել։

Այ թե ինչ… Սիրտս թուլացավ հանկարծ։  
Քիչ մնաց շունչս կտրի։ Մոտեցա եղ խոսողնե-  
րից մեկին, մի շապավոր մարդու։

— Դու կիմանաս, ասում եմ, պարոն։ — Ում  
են ծեծել. ըննավորներից վորին։

Հարցնում եմ, բայց սիրտս գողում ե։  
Շլապավորը թե՝

— Մի տղի։

— Իսկ յես կարծում եյի, ասում եմ, Վիկ-  
տորիս…

Եղ մարդը թե՝

— Աղջիկ ունես բռնված։

— Հա, ասում եմ, նրան ել բռնել են բալ-  
շիկության համար. բայց անմեղ ե աստծու գա-  
ռի պես։

— Ինչ ե աղջկադ անունը, հարցնում ե։

— Վիկտոր Դանելյանց, ասում եմ. — Գրա-  
դարանի աղջկը։

Եղ մարդը յերեսը շուռ տվեց՝ հանկարծ։

— Նա ե անմեղ, ասում ե. — Վոր անմեղը նա ե,  
քա մեղավորը ով ե։ Նրան ծեծը, ասում ե, քիչ ե։

Եստեղ յես ել չհամբերեցի—մի վոտս յետ  
գրի, մինն տուաջ։

— Դու սվ ես, հողեմ զլուխդ, վոր եղապես գուրս ես տալի քեզ ու քեզ...

Վոր չսկսեցի եսպես, եղ մարդը թողեց ու հայդա: Ինչն ել շլապով մարդ եր:

Քիչ յեղը, յերբ հանգստացա, ճաշն ուզեցի տանեմ ներս: Զընդունեցին:

— Ինչու, ասում եմ զարառուին:

— Կարգադրված ե՝ չընդունել:

— Պատճառը:

— Եղ քու իմանալու բանը չի, պառավ, ասում ե:

Եղ զարառուների մեջ կար մի դարսեցի տղա—մեծ—մեծ աշքերով, ճակատը ճղված ու կարված: Ինձ հետ լավ եր. միշտ «մայրիկ» կասեր. խղճում եր. ինչ վոր ասեյի—կոգներ: Բայց եղ բոպեցին նա եղտեղ չեր:

Եղ ժամանակ, յերբ յես խոսում եյի զարառվի հետ,—բռնավորներն սկսեցին յերգել: Ենպես են յերգում վոր՝ բանտը թնդում ե: Յերգում են բալեիկների յերգը, են վոր ամեն տեղ յերգում են հիմի—«Անտիրնացոլը»: Ու ամենից բարձր լավում ե Վիկտորի ձենը՝ զի՞ւ, զանգակի պես: Յերգում են բոլոր սենյակներում, յերգում են ձեն-ձենի տված: Բանտի ծառայողները, դարառուները անհանգիստ գնում են, գալիս, ուզում են մտնեն ներս, ուզում են արգելել յերգելը,

բայց նրանք՝ հեչ: Վախից՝ սիրտս ջուր ե դառել: Ասում եմ՝ հրես բոլորին կըկոտորեն, կըսպանեն... Բայց նրանք՝ սկի: Յերգում են, ու բոլորից բարձր Վիկտորը: Տեր աստված, սա տանը չեր յերգում, մտածում եմ,—եստեղ սրան ինչ ե պատահել... Մին ել, ասում եմ, գուցե նա չի, ուրիշ ե: Բայց չե. տեսնում եմ վոր նա ե: Վերջապես յես իմ աղջկա ձենը ճանաչում եմ: Յերգում են եսպես բոլոր սենյակներում, յերգում՝ են իրար ուժ տված, ու ամենից բարձր ելի Վիկտորի ձենն ե գալի:

Մի քիչ վոր լսեցի, արտասուքս եկավ, ինձ չկարացի պահեմ.

— Զան, ջան, ասում եմ,—Վիկտոր ջան: Յես քու զանգակ ձենին մեռնեմ...

Բանտի զարառուների մեծը բարկացավ.

— Դու սվ ես վոր, ասում ե, եղպես ձեն ես հանում:

Ու կասկածով, զարմանքով նայում ե ինձ:

— Յես, ասում եմ, Վիկտոր Դանելյանցի մերն եմ: Են վոր յերգում ե՝ իմ աղջիկն ե:

Ասում եմ, վոր սիրալ գութ քցեմ: Բայց նա, տեսնում եմ, չե—զրանից ավելի բարկացավ.

— Դե, հեռացիր, ասում ե, թե չե...

Եղ ժամանակ իմ ծանօթ զարսեցի տղեն եկավ: Մոտեցավ ու կամաց.

— Մայրիկ, ասում ե, գնա, անհարմար ժամանակ ե:

Մեծի բարկությունը տեսնելով՝ գնացի: Եղ զարսեցի աղեն ինձ ճամբու դրեց մինչև դուռը:

— Եգուց բեր, ասում ե, եսոր խառնված ոք ե:

Իսկ յես դեռ չեմ հանգստանում.

— Վիկտորիս հո չե՞ն ծեծել ասում եմ:

— Չե, ասում ե, հանգիստ կաց. որիոր զին ծեծելու իրավունք չկա: Միայն թե հաց չե՞ն ուզում ուտել:

— Վհնց թե. սոված պըտի մնան, ասում եմ:

Ասում եմ ու մտածում—գժվել են դրանք, ի՞նչ ե. մարդ ել տված հացը չուտի. —Բա սոված պըտի մեռնեն, հարցնում եմ:

— Չեն մեռնի, ասում ե, հանգիստ կաց:

— Թողեք, ասում եմ, —յես իմ աղջկանը համոզեմ, վոր հաց ուտի. նա ջահել ե, արածը չի հասկանում:

— Չե, ասում ե, —յես կարող համոզել. միենույն ե, նա առանց ընկերների չի ուտի:

— Գուցե ձեր հացը չեն ուզում, ասում եմ. —իմ հացը տվեք, իմ հացը կուտեն:

— Չե, ասում ե, միենույն ե. չեն ուտի: Զենք ել կարող տալ, նրանք պետք ե մեր հացը ուտեն...

Ու բացատրեց ինձ, վոր նրանք վոչ թե չեն ուզում հաց ուտել, այլ դրանով, ասում ե, բողոքում են:

Յես բան չհասկացա. ինչպես թե հաց չեն ուզում ուտել. սոված մնում են, թե բողոքում ենք: Այ քեզ շաշեր...

Բողոքում ենք: Խոսք են գտել...

Տուն եկա. վոչ հաց ե կուլ գնում, վոչ յուր: Երեխես ենտեղ սոված—յես հաց ուտեմ: Վոր մտածում եմ—զլխիս կրակ ե մաղվում: Ծունկո ծեծում եմ ու ինքս ինձ. «Կուրանամ յես, կուրանամ»...

Ու եղ որը՝ զիշերը միշե լուս, թե գուք իմ տանը քնել եք, ենպես ել յես... Եղ որն ել Միխակի կնկա—Լիզինկի տոնն եր: Վազանդարներ: Հրավիրված մարդիկ: Ուտում են, խմում, յերգում: Տախտիս վրա կուչ եկած՝ լսում եմ նրանց ձենքը, թե վհնց են կենաց ասում: Ամեն կենացից հետո սազանդարները ածում են ու յերգում: Եսպես մինչև զիշերված կեսը: Իսկ զիշերված կիսից հետո —աթոռները, սեղանները գրգռալով դես ու դես քաշեցին ու սկսեցին պարել: Վհնց են թիթըիւկացնում պոլը, վհնց են պարում—քիչ ե մնում ոճորքը փուլ զա... Լեկուրի՝ են պարում թե լեզվինկա—չեմ իմանում: Բայց ենպես են պարում, վհնց վոր զիվահար... Պարեցին մինչև լուս. ու լուսը բազվեց թե չե—դուրս եկան բալ-

մացի, վոր ել նստեղ են ածում ու պարում...  
ենպես վոր՝ դարդը մի կողմից, եղ դալմաղալը  
մի—չթողին աչքս կպչի:

Առավոտը բացվեց թե չե, նորից պատրաս-  
տություն տեսա Վիկորին ճաշ տանելու։ Ասի՞  
երեկվա եփածս հնացած ե. նոր ձու եփեցի,  
կաթ տաքաջրի ու տարա:

Ելի՛ չի կարելի՛ Ելի՛ բոնավորները, ասում  
ե, հաց չեն ուզում ուտելի՛ Յես ել թե՛ թողեք,  
ասում եմ, ախպեր, իմ աղջկանը համոզեմ—ուտի՛:

Զե վոր չե...

Յերեք որ եսպես հաց չընդունեցին. Բայց  
յերեք որն ել, քանի գնում եյի, լսում եյի վհնց  
են յերգում դրանք. Յերգում են ձեն-ձենի տը-  
ված, յերգում են բոլոր սենյակներում, յերգում  
են ենպես, բանտը թնդում ե կարծես. Ու յեր-  
գողների մեջ, ամենից զիլ, լսվում ե ելի Վիկ-  
տորի ձենը, վոր զնդում ե զանգակի պես...

Ինչ յերկարացնեմ—մի որ ել, յերբ հաց  
տարա բանտ, հայտնեցին թե՛ եգուց ել հաց, կե-  
րակուր չբերես:

— Ինչու:

Թե՛ բոնավորներին տանում են երեան:

— Ինչու:

— Եղ քու իմանալու բանը չի, ասում ե ծա-  
ռայողը, են դարսեցի տղեն. —Միայն եսքանն ի-

մատս կծեցի. Տեսա վոր եստեղ մի բան  
կա, Շատ եյի լսել վոր բոնավորներին թագուն  
տանում են սպանում, հետո կերակուրը ընդու-  
նում, մթամ թե՛ եստեղ ե... Եղ որերին ել մե-  
կին՝ Մացո եյին ասում—եղպես տարան. Նոր  
մի շաբաթ հետո իմացանք, վոր սպանել են:—  
Ուզում եր փախչի, դրա համար, ասում են: Մի  
խոսքով՝ եղ վոր լսեցի՝ սիրտս ահ ընկավ: Բայց  
տեսա վոր եղ մարդը խղճում ե ինձ: Ու հար-  
ցըի, թե յերբ են տանելու:

— Ել, ասում ե, ափել բան չեմ կարա ասի:  
Եսքանն ել վոր ասի, շնորհակալ եղիր:

— Շնորհակալ եմ, ասում եմ, բայց, թե  
արեղ սիրես, ասա մի իմանամ:

— Չե, ասում ե, չեմ կարող: Ուզում ես  
ինձ պաշտոնից դուրս անեն, սպանեն:

— Վոչինչ ել չեն անի, ասում եմ.—վերև  
աստված, ներքե՛ յես ու դու: Մեր խոսածը  
մարդ չի իմանա: Ասա—ինչ ժամանակ են տա-  
նելու. յերեկը, զիշերը, սհաթի քանիսին...

Շատ վոր խնդրվեցի, աղաչեցի, խղճաց եդ  
պարսեցի տղեն (աստված յերկար կյանք տա-

նրան և աջողություն։ ինչ գործ ել բոնի—բարին առաջի, չոր քարին ել վոր գնա—կանաչի։ Տեսավ՝ արտասուքը աչքերիս լաց եմ ըլում—խղճաց։ — Ես գիշեր, ասում ե, ժամը 12-ին։ Բայց, իմացած եղիք, ասում ե, մարդու բան չասես, թե չե վատ կըլի։  
— Խելառակվել չեմ, ասում եմ։ — Դու հանգիստ կայ։

Եղ որը, մինչև գիշերվա 10-ը, վասց վոր ինձ կրակը գնես—երգում եմ։ Եկել եմ տուն ու վիկտորի համար պաշար եմ պատրաստում։ Ճամփա ե գնում, մտածում եմ, պետք ե հետը մի բան գնել։ գիտեմ, վիկտորի բնավորությունը ենպես ե, վոր շատ պաշար չի սիրում, բայց ասում եմ վոչինչ, ընկերների հետ կուտի։ Գուցե ճամփին, մի քանի որ մնաց, ով նրան հաց կըտա… Զու եմ եփում, հավ եմ եփում. պանիր առա լուշի մեջ դրի։ Եփեցի, հավաքեցի, դրանց հետ ել մի քանի փոխնորդ, մի գերիս—կապոց արի ու զեռ սհաթի ութը չեկած՝ գնացի վակզալ։ Ասի՞ շուտ գնամ, ով ե իմանում, միտքները փոխեն գուցե ու շուտ տանեն։ Տանը սպասելու փոխարին, ավելի լավ ե ենտեղ սպասեմ։ Տանը հոնական չեմ կարում. թվում ե՝ վիկտորին տանում են արդեն, թվում ե՝ ել չեմ տեսնելու—սիրտ անհանգիստ ե ենպես, այ կրակվի իմ սիրտ։ Հա-

բազատ աղջիկ են տանում, մտածում եմ, միակ աղջիկ են տանում ոտար տղերանց հետ… Աղջիկ պահեսմեծացնես—են ել եսպե՞ս։ Վոր մըտածում եմ—ուղեղս ժաժ ե ընկնում։ Մի շունչ ել չկա մոտս, վոր սիրու տա, միսիթարի—հանգըտանամ մի քիչ։ Ենպես եմ, վոր սիրտս ուղում ե բերնովս դուրս կա։ Կապոցը ձեռիս ճամփա եմ ընկել ու գնում եմ. վոտներս զորով եմ փոխում—ենպես թույլ եմ։ Մութն ե, ցեխ. աստղ ել չկա յերկնքում։ Ֆայտոնները գնում են շրփշփառվ ու ցեխը թափում վրես։ Տանից մինչև վակզալ՝ աշխարքի տեղ ե. մինչև հասա՞ ինն ել ինձ հասավ։ Գնացի կապոցը ձեռիս նստեցի ծառերի տակ։ Եղտեղ ել՝ շատ ճամբորդներ՝ կնանիք, մարդիկ իրանց կապոցների վրա նստել՝ պոեզի յեն սպասում. դրանց հետ ել երեխեք—մինը լաց ե ըլում, մինը քնել ե, մի ուրիշը բլբլում ե մոր հետ։ Եստեղ-ենտեղ ուրախ խոսում—ծիծաղում են։ Սիրտս դանակ խրես՝ արին չի կաթի։ Նստել եմ մենակ ու մտքիս յետեկից ընկած՝ սպասում եմ։ Մին ել մի տղամարդ մոտեցավ թե։

— Քույրիկ, ուր ես գնում։

— Տեղ չեմ գնում, ասում եմ։ — Աղջկաս տանում են, յեկել եմ ճամփու գնեմ։

Նա թե՝ ուր են տանում, ով ե տանում։  
Սա. Զորյան, Գրադ. աղջիկը—5.

— Կառավարութինը, ասում եմ.—Բոնել ետանում ե Երևան։

— Ի՞նչի համար ե բոնել։

— Բալշեկության համար։

Եղ մարդը կանգնեց, «Հըմ» արավ ու՝ «բակը թողնեն, ասում ե, դու նրա հետ խոսես»։

— Խի չեն թողնի, ասում եմ.—Նրա մերն եմ, հո ստար չեմ. միակ աղջիկս ե՝ տանում են ու, ել ով սաղ մնա, ով ապրի—չեն թողնի իրար ու երես տեսնենք. վերջին անգամ երկու խոսք առնք իրար։

Եղ մարդը շվարած գլուխը թափ տվեց ու գնաց. Դա գնաց, մին ել, ընը՛, զինվորները հավաքած խալխին քշում են. «Հեռու, հեռու»... Ի՞նչ ե, Տեսնեմ հրես բռնավորներ են բերում. Հողմից զինվորներ՝ հրացաններով, բանով։ Հորս կուչ եկավ. ծնկներս դողացին։

Ուրեմն Վիկտորիս տանում են, Վիկտորս սրանց մեջ ե, Շշմածի պես եմ, յերազի մեջ։ Զինվորները խալխին հեռու յեն քշում, յես մոտենում եմ տեսնեմ Վիկտորը դրանց մեջ ե, թե չե։ Մտիկ եմ անում, մտիկ եմ անում—բան չեմ տեսնում. զինվորներն ենպես են շըջապատել վոր չեն երեսում։ Գիշերն ել, վոնց վոր ասի՝ վոր չեն երեսում։ Գիշերն ել, վոնց վոր ասի՝ մութն ե. աստղ չկա յերկնքում. աչքերս եր մութն ե. աստղ չկա յերկնքում. աչքերս արցունքից քաղված, լավ չեն ջոկում. տեսնում արցունքից քաղված,

Եմ գլուխներ, ուսեր։ Բայց Վիկտորին չեմ ջոկում։ Զըի, ասում եմ, նրան թողել են. խղճացել են, վոր աղջիկ ե, տղերանց պես չի կարելի չարչարել, ու չեն բերել. Դրանց տարանց պրեզի կանգնելու տեղը։ Յես ել՝ կապոցը ձեռիս, դրանց յետից։ Ուզում եյի մոտենամ, մին ել տեսնեմ։ Դրանք, մութի մեջ, զինվորներով շըջապատված, եղ կես գիշերին սկսեցին իրանց յերգը—«Անորինացոլլ»։ Սկսեցին ու վոնց են յերգում, աման, վոնց են յերգում... Խալխը հավաքվեց. գուրս թափվեցին մարդիկ զալերից, գուրս թափվեցին վակզալի տներից, բուտկաներից. հավաքվեցին ճաղերի մոտ, ծառերի տակ ու քամած են անում, թե ես ի՞նչ բան ե ես կես գիշերին... Դրանք սկսեցին թե չե—յես ելի Վիկտորիս ձենը ջոկեցի, վոր բոլորի ձենից բարձը եր—զիլ, զանգակի պես... Հենց վոր յերեխիս ձենը լսեցի՝ ելի չկարացի ինձ պահեմ, ինչպես են անգամ՝ բանտի հայաթում։

— Ջան, ջան, Վիկտոր ջան, ասում.—յես քու ձենին մատաղ...

Ու ուզում եմ մոտենալ, բայց ով կըթողնի։ Երկու վոտ փոխեցի թե չե, զինվորը՝

— Հեռու, հեռու. չի կարելի...

— Այ «չի կարելին» ընկնի փորդ, ասում եմ մտքումս ու հիմի ել ուզում եմ մեկել կողմից

առաջ գնալու եստեղ ել մի ուրիշը «Զի կարելի»։ Ասում եմ իմ աղջիկը դրանց մեջ ե, բայ եմ տալիս։

— Զի կարելի, չի կարելի... Ու ենպես մի բոթեց, վոր քիչ մնաց ընկնելի մեջքիս վրա։

Իսկ նրանք՝ բռնավորները, յերգում են իրանց յերգը, յերգում են գժվածի պես, յերգում են ձեն-ձենի տված, յերգում են կարծես զին-վորների ջղու, յերգում են բարձր... Բոլորի մեջ ելի ջոկում եմ Վիկտորիս ձենը, բոլորի մեջ ելի նրա ձենն ե բարձր... Ուզեցի ձեն տամ, իմացնեմ, վոր յես եստեղ եմ, բայց, թարսի պես, պոեզը հանկարծ շվացրեց մոտիկ ու եկավ շրխշընկալով։ Մարդիկ իրար զլիով դիպան։ բեռները, կապոցները հավաքում են, պատրաստ կենան, վոր պոեզը կանգնի թե չե—վազոնները մտնեն։ Մի կողմից վազում են, մի կողմից կանչում են իրար, բիլեթ են գոռում։ Իսկ նրանք՝ բռնավորները յերգում են ձեն-ձենի տված։

Ել եղտեղ, եղ դալմաղալի մեջ, իմ ձենը կը լսվէր վոր։

Յերբ պոեզը կանգնեց, դրանց՝ բոլորին՝ շրջապատած տարան պարավոզի կողքի վագոնը, են, վոր լուսամուտները, տեսած կըլեք, երկաթած են բանտի պես։ Դրանց տարան, յես եւ կապոյը ձեռիս, նրանց յետելից։ Մարդիկ զբժ-

վրժում են, վագոններն են մտնում, դուրս են գալի։ Անցնել չի ըլում։ Բոթում են գես, բոթում են դեն-չեն թողնում մի դրանց համեմ։ Վերջը, աչքս զինվորների խշտիկների վրա, վոր նրանց չկորցնեմ, զնացի մի կերպով, զնացի հասա ենտեղ, վոր վերջին բռնավորին վագոն են նստացնում, նրա յետելից ել զինվորները՝ հրացանները ձեռներին, հրացանների ծերին խըշտիկներ։

Եղ վոր տեսա՝ սիրոս մի ուրիշ տեսակ եղավ։ «Վա՞նց թե, ասում եմ, ենպես պլատի տանեն, վոր վերջին անգամ իմ յերեխին չտեսնեմ։ Զե, ինչ ել ըլի, ասում եմ, պետք ե նրա հետ խոսեմ, թեկուզ եղ խշտիկներից մինը սիրոս խրեն, թեկուզ, մինչև անգամ, պոեզի տակը քըցեն»...

Մատածեցի եսպես ու վազոնի դեմը կանգնած՝ ձեն տվի.

— Վիկտոր, Վիկտոր չան...

Լավ եր զինվորները չհասկացան ում եմ գոռում—ձեռ չտվին։ Իսկ Վիկտորը, ինչպես եղավ, չգիտեմ, ձենս լսեց, ու վազոնի ակուկից։

— Մայրիկ, ասում ե, դժւ ես։ Մնաս Քարով։

— Յես եմ, Վիկտոր չան։ Քեզ համար պաշար ու փոխնորդ եմ բերել։

Ասում եմ ու ձեռիս կապոցը բարձրացնում։  
Խոսքի կեսը դեռ բերանումս, բանտի մարդ-  
կանցից մինը մոտեցավ, թևս բռնեց ու բո-  
թում ե.

— Բոնավորի հետ խոսել չի կարելի, ա-  
սում ե.—Հեռացիր, հեռացիր...

Են կողմից մյուսները ու նրանց մեծը.

— Հեռացըն, հեռացըն, ասում են, — չէ  
կարելի։

— Ինչու չի կարելի, ասում եմ.—Իմ աղ-  
ջրկանը ուր եք տանում, անսատվածներ, իմ աղ-  
ջիկը բաշեկի չի, իմ աղջիկը...  
Ասում եմ, գոռում ու ելի առաջ եմ ու-  
զում գնալ։

Զեն թողնում։

Իսկ վիկտորը վագոնից.

— Մայրիկ, ասում ե, հանգիստ կացր եղ  
լրբերի հետ մի խոսի։ Յես բաշեկի եմ, թնդ  
ինչ ուզում են անեն։

Ենտեղից մյուս տղեքը՝ վիկտորի ընկեր-  
ները.

— Մայրիկ, գնա տուն, մայրիկ, հանգիստ  
կաց...

Հեշտ ե ասել՝ «հանգիստ կաց»։ Սիրտս կրակ-  
ե ընկեր նրանք—«հանգիստ կաց»։ Գոռում եմ  
ու ուզում եմ առաջ գնամ, ժողովուրդն ել հա-

վաքվել-կիտվել ե ձենիս վրա։ Մարդիկ՝ գլուխ-  
ները վագոններից հանել, մտիկ են անում ու,  
ով գիտի, մտածում են՝ «Ես ինչ ղարաշի կնիկ ե»։  
Բայց ինձ համար—հեջ։ Մահն աչքիս տակն եմ  
առել. ել մարդ, մադաթ չեմ հարցնում—գոռում  
եմ, վոր թողնեն...

Բայց ինչ արի—ել չկարացի առաջ գնամ։  
Վրա յերեք զանգը տվին։ Մարդիկ ելի իրար գըլ-  
խով դիպան։ Պոեզլը շարժվեց, Մին ել Վիկտո-  
րը ձեն տվեց.

— Մնաս բարով, մայրիկ։

Ու հենց պոեզլը շարժվեց, նրանք՝ Վի-  
կտորն ու ընկերները, յերգեցին ելի իրանց  
յերգը։ Յես չկարացի համբերեմ. վազում եմ  
պոեզլի յետեից ու ձեն տալի.

— Վիկտոր, Վիկտոր...

Պոեզլը գնում ե՝ յես վազում եմ, պոեզլը  
գնում ե՝ յես վազում եմ...

Ել չիմացա ինչ պատահեց դրանից հետո։  
Առավտոր զարթնեցի—վակզարումն եմ. բուֆետ  
պահողի ոթախում։ Զարթնեցի ու ինչ տեսնեմ—  
վրես, զուխս թաց։ Բուֆետի աղջիկը, սիպտակ  
մարտուլը հագին, մի ջրի աման ձեռին, կանգնել  
ե կողքիս ու ձեռը վլուխս ե քսում։

— Վհնց ես հիմի, մորքուր, հարցնում եր լավ ես:

Նոր իմանամ, վոր պոեզի յետևից վագելիս՝ ուշա գնում եւ Ծառայողները տեսնում են, վերցնում են բերում բուֆետ պահողի ոթախը կանչում են վակվալի բժշկին, ինձ ուշքի յեն բերում, դեղ են տալիս՝ քնում եմ: Ես բոլորը եղ աղջիկը պատմեց:

Թիչ հետո ինձ բերող տղեքը եկան ինձ տեսնելու: Կակարզով, բանով, յերկաթուղու շորեր հագած տղեք եյին: Երկու հոգի:

— Վհնց ես, մայրիկ, ասում են:

Ու զարմանում են, վոր յես գնացող պոեզի յետևից վագել եմ:

— Բա կնիկն եղակս սիրտ կունենա, ասում են. — Պոեզի յետևից ես ընկել ու «Վիկտոր» ես կանչում: Վիկտորը քու ի՞նչն ե, հարցնում են:

— Իմ աղջիկը:

— Մենք եղակս ել զիտեյինք, ասում եւ Միայն մերը կարող ե եղակս սիրտ ունենալ:

Հետո պարզվեց, վոր դրանք իմ Վիկտորին ճանաչում են:

— Վիկտորը մեր ընկերն ե, ասում են, մայրիկ, Դու մի վախի, հանգիստ կաց: Վերջը աթեն բան լավ կըլի...

Սիրտ տվին, արեներն ապրի, եղ տղեքը, չայ բերին՝ քցովի, խմացրին, վերջն ել՝ փայտոն նստացրին, թե՝ «գնա»... Եղտեղ, Փայտոն նըստելու ժամանակ, ուրանցից մինն ականջիս ընկավ, թե՝ «մայրիկ», յեթե բանի կարիք ունենաս, արի մեզ ասա, առանց քաշվելու: Դու մեր մերն ես, ասում ե, հեջ ամանչիլ մի: Վիկտորը մեր ընկերն ե, մեր քույրն ե... Կը գաս, ասում ե կը հարցնես ինձ: Իմ անունն ել, ասում ե, Պետրե ե»...

Եղ խոսքերը սրտիս սին տվին:

«Փառք քեզ, աստված, ասում եմ, դեռ լավ մարդիկ կան աշխարի երեսին»:

Եղ ժամանակ տեսա, վոր պաշարի կապոցը չկա: Կորել եր: Հավը, ձուն, հացը — զլուխը քար. Վիկտորիս շորերն ել հետն եր կորել...

Փայտոնով վոր ինձ տեսան հարեանները՝ կանգնել զարմացած մտիկ են տալիս, թե ես բացարար Աննեն ինչ սումի տեր ե, վոր Փայտոն ե նստել: Ես ել պետք ասեմ, վոր իմ կյանքում, մինչեւ եղ, երկու անգամ եյի Փայտոն նստել: Մի անգամ, յերբ Միխակի կնիկը — Լիզինկեն հիվանդ եր — զրկեցին Փայտոն բերեմ — Եղ ժամանակ: Եղ-ել վհնց ելավ: Գնացի Փայտոն կանչեցի. Քայտոնին ասում ե՝ «Դե նստի, գընանք»: Մեկ եղ: Մեկ ել աղջիկ ժամանակս եմ նստել...

Եղպես՝ հարևանները զարմացան ինձ ֆայտոնի վրա տեսնելով, իսկ մեր տանտեր Միխաղի կը կնիկը—Լիզինկեն, բալկոնում կանգնած՝ նաշկեց ինձ, նայեց ու քթի տակ ծիծաղեց:

— Ենքան զարգացել ես, ասում ե, հիմի ել ֆայտոնով ես ման զալի:

Ծաղը ե անում:

Չեն չհանեցի: Բայց նրա ծաղըը սրտիադիպակ դամակի պես, իմ որին, ասում եմ, որա ծաղըին: Ու բան չեմ խռոսում:

— Քեզ հետ եմ, աղջի, Աննա, ասում եց դեսը մտիկ արա:

Գլուխս չբարձրացըի: Սիրտ չունեմ:  
Իսկ նա վերեկից, նորից.

— Գեսը մտիկ արա. բան եմ ասում:

— Ի՞նչ կա, հարցնում եմ:

Թե՛ արի, ասում ե, պոլերը լիա:

— Ե՞ն, ասում եմ, իմ սրտին, քու դարդին:

Պոլ լվանալու սիրտ չունեմ, ասում եմ:

— Խի՞, ի՞նչ ե պատահել քու սրտին:

— Ե՞ն, ասում եմ.—Վիշտորիս տարան եւ

բեան:

Ի՞նչ ասի, վոր լավ ըլի:

— Ծատ ել լավ արին, ասում ե, աշքն ել հանեցին աղգի դավաճանի: Դրա համար ել, ասում ե, դու տիրում ես: Արի, արի պոլերը լիա...

Քիչ առաջ ծաղրեց—մի դանակ խրեց սիրտըս: Ես ել՝ մի նոր դանակ: Ենպես եղա վոր—տաք ու սառը քրտինք տվի. Ենպես եղա վորցավս մոռացա, կատաղեցի.

— Խի՞, ասում եմ.—յես մեր չեմ. յես սիրտ չունեմ, վոր իմ զավակի համար ցավի՞։ Շունը վոր շուն ե, ասում եմ, նա ել ե դարդանում իր զավակի համար: Հիմի դու ինձ շանից ել վատ ես համարում... Չե, ասում եմ, յես պոլ լվանալու սիրտ չունեմ...

Ասի ու մտա տուն:

Նա մնաց յետեկցս նայելով:

Ու եդ որվանից խռովեց ինձանից: Ել բանի չեր կանչում: Մի գաղթական կնիկ եր գտել — նրան եր բանեցնում: Դա ել լվացք անել չը գիտեր. շորերն ենպես եր մզում՝ պատում եր, ենքան լեղակ եր քցում—շորերը վոնց վոր կապուտ ներկես...

## 5.

Երեան տանելուց հետո երկու-յերեք շաբաթանցավ՝ Վիկտորից նամակ չկար: Յես ել—անհանգիստ կնիկ—ինձ ուտում եմ. գիշերները չեմ կարում քնեմ: Ամեն որ նամակ բերողին հար-

տնում եմ. «Անսա Դանելյանց, նամակ չկա»:  
 «ԶԵ»: Ու խնդրվում եմ, վոր յեթե նամակ ըլի  
 ու յեթե տանը չըլեմ—լուսամուտի կոտրած տե-  
 ղով քցի նեքսե: Չեյի ուզում իմ նամակը-բանը  
 կիզինկի կամ նրա աղջկերանց ձեռն ընկնի:  
 Խոռվ եյինք. նրանք ինձ հետ չեյին խոսում,  
 յես՝ նրանց: Եսպես մի ամիս ել անցավ՝ նամակ  
 չեկավ: Հազար ու մի բան եմ մտածում—տես-  
 նես ինչ պատահեց, տարան երեխուս գլուխը  
 կերան, ինչ ելավ: Մարդ ել չկար սրտացավ,  
 վոր սիրտս բանամ, հետը խոսեմ: Ում հետ ել  
 խոսում եյի՝ իմ աղջկանն եր վատ դուրս բե-  
 րում: Մենակ Պետրեն եր, վոր սիրտ եր տալիս  
 ինձ. «Նամակ չլինելը, ասում եր, վոչինչ. յես  
 հաստատ գիտեմ, վոր տեղ են հասել ու բոլորն  
 ել լավ են»: Մի քանի անգամ գնացի նրա մոտ  
 —միշտ եսպես խոսքեր: Ու ամեն անգամ ել  
 քանի գնում եյի մոտը, կը հարցներ.—Մայրիկ  
 յեթե կարիք ունես, մի քաշվի, ասա. յես քու  
 վորդին, դու իմ մերը...

Յես ամաշում եյի. շատ ել կարիք ունեյի,  
 բայց քաշվում եյի: Ինչքան չըլի ոտար տղայե,  
 մտածում եմ.—յես նրանից վոնց փող վերցնեմ...  
 Անցավ մի ամիս մի շաբաթ—նոր մի կտոր նա-  
 մակ եկավ—«Մայրիկ, յես լավ եմ. բարեվուս  
 եմ»: Հետո ել թե՝ «Պոչաղ կաց: Իմ մասին մի

մտածի: Վիկոնր Դանելյանց»: Եղպես ել գրում  
 Ե՝ մի՛ մտածի... Ամբողջ որը ուշք ու միտքս  
 իրա վրա ե, իսկ նա՛ մի՛ մտածի... Դրանից հե-  
 տո մի քանի նամակ ել եկավ, ելի եղպես կարձ  
 —յես լավ եմ, դու հանգիս կաց, իմ մասին  
 մի մտածի... Եսպես, հինգ թե վեց ամիս եր,  
 հոկտեմբերն արդեն անցել եր, նոյեմբերը եկել  
 —յես հանգիստ չեմ կարում նստեմ, ամեն տեղ  
 կարծես ինձ հուշտ են անում, թե ես ինչ մեր  
 ե, վոր աղջկա մասին չի մտածում: «Ես ել մի  
 բան չի, ասում եմ ինձ ու ինձ,—մի աղջիկ ու-  
 նենամ ես աշխարհում, են ել—բանտում ու  
 հինգ-վեց ամիս երեսը չտեսնե՞մ: Ել յես ինչ  
 մեր եմ», մտածում եմ»:

Մտածեցի, մտածեցի—մի որ ել վեր կացա  
 գնացի Պետրեյի մոտ: Եսպես-եսպես:

— Ուզում եմ գնամ երեան, Պետրե ջան,  
 ասում եմ.—Վիկորին տեսնեմ:

Պետրեն թե՝ վաչինչ ել չկա, ասում ե,  
 զուր մի գնա: Յես տեղեկություն ունեմ, վոր  
 ընկեր Վիկորը լավ ե:

— Զե, ասում եմ, պետք ե գնամ իմ աշ-  
 քով տեսնեմ:

— Իսկ փող, ճամփի ծախս ունես, հարց-  
 նում ե:

— Զե, ասում եմ, մի կարպետ ունեմ. կը  
 ծախսեմ—կերթամ:

**ՊԵՏՐԵՆ ՄՏԱԾԵՑ:**

— Դե վոր եղակես ե, ասում ե,—վոր հաստատ վորոշել ես գնալ, ել զուր ծախս մի անիցես քեզ կուղարկեմ իմ մոր տեղը: Յես իրավունք ունեմ, ասում ե, վոր իմ մերը պոեզով ձրի գնադա:

— Ե՞ն, շնորհակալ եմ, ասում եմ, վորդի:  
**Աստված մուրազդ կատարի:**

— Վոչինչ, մայբիկ ջան, ասում ե.—դա իմ պարտքն ե. ընկեր Վիկտորին յես շատ եմ պարտական: Բայց հիմի, ասում ե, դու ես ասաերևան վոր գնաս՝ վարտեղ կամ ում տանը պըտի իջնես:

Յես եղ մասին չեյի մտածել: Դրուստ, ասում եմ, ես վոր ուզում եմ գնամ՝ վարտեղ կամ ում տունը պըտի մնամ: Փողոցում հն չեմ կարա ապրեմ: Ամառ ել չի, թե ասես՝ մի պատի տակ կուշ կըդամ—կանցնի: Բայց, համարյա թե, ձմեռ եր: Նոյեմբերը: Մեր սարերումն արդեն ձուն եր եկել:

— Յես ել չգիտեմ, ասում եմ, Պետրե ջան, ում տունը կարող եմ գնամ. վոչ ծանոթ ունեմ, վոչ բարեկամ: Առաջին անգամն ե, վոր երևան եմ գնում: Առաջին անգամն ե, վոր պոեզ եմ նստում:

Դրուստ վոր—մինչև եղ յես մեր քաղաքից

ուուրս չեյի եկած: Մի քանի անգամ վոտով գնացել եյի Սարիգեղ՝ ուխտի: Եղքան: Մինչև եղ՝ պոեզ ել չեյի նստած: Պատահել եր—դաշնիկների գնալու ժամանակ—ում լվացքը անում եյի—գնում եյի նրանց ճամփու քցում. ապրանքները, կապոցները վագոն եյի գնում. բայց տեղ գնամ—չե:

Ես վոր Պետրեն լսեց—նորից մտածեց:

— Վոչինչ, ասում ե, անհոգ կաց: Յես քեզ մի ծանոթ կանդլխորի հետ կուղարկեմ. նրան ել կասեմ, վոր տանի քեզ իմ լավ ընկեր Արառշի տունը, վոր հենց վակզալի մոտ ե: Նամակ ել կը տամ, ասում ե, վոր քեզ լավ մտիկ անեն:

Արևն ապրի. Եղակես ել արավ:

Մինչև գնալս յես ելի պաշար պատրաստեցի—նորից հավ, ձու եփեցի, մի երկու կտոր լավ վոչխարի պանիր առա (Վիկտորը եղ պանիրը շատ եր սիրում), հավաքեցի Վիկտորի մնացած փոխորդները, մի հին գերիա, Ժումայիեն, գուլպաները, ձմեռվաք բարմանները. Եղ բուլրը մի կապոց արի, հացն ու ուտելիքը՝ մի: Խնքս ել մի քանի բան հագա իրար վրա, վոր ճամփին չմրսեմ, հետո շալս վեր կալս ու գնացի վակզալ:

նը կովում եյին իրար հետ, մոր հետ, բայց հենց փողոց եյին դուրս գալի թե չե—«Նուշա ջան, Մաշա ջան»... ենպես ջանով եյին խոսում, կարծես կաթն ու կորեկ են: Տանն իրար ապում եյին—դուրսը եղակես: Յես մի անգետ կնիկ եմ. ուրիշ բաներ չեմ հասկանում, բայց աղջկերանց, կնանոնց բանը—շատ լավ եմ հասկանում... Մտա թե չե՝ եղ նուշեն ու Մաշեն, իրար նայեցին ու ծիծաղեցին:

— Յեկավ, ասում են:

Քանի ամիս եր, ինչպես ասի, զբանց տուն չեյի գնում: Ես անգամ վոր մտա, կարծեցին ճարահայյալ եմ, մի բան խնդրելու եմ եկել: Նրանք ծիծաղեցին—յես տերը չեղա: Կապոցը դրի զբան մոտ, վոտներս հանեցի, շալը թևիս, խալիչի վրով առաջ գնացի, մոտեցա սեղանին ու՝ «Քարրիկուն ձեղ» ասի: Գլուխ տվի:

Կսիկը—Լիզինկեն երեսը շուռ տվեց, իսկ ինքը—Միխակը՝ հոնքերը հավաքեց, ծանր-ծանր մտիկ արավ ինձ ու, վոնց վոր, խոսքերը քալ-փաթինով քաշես.

— Բարով: Ի՞նչ կա:

— Վոչինչ, խալփա, ասում եմ, սաղութին: Յես եսոր գնում եմ երևան, կը խնդրեյի վոր... Խոսքի կեսը դեռ բերանումս, կնիկը—Լիզինկեն յետ դառավ աթոռը գոռացնելով:

Ստ. Զորյան. Դրադ. աղջիկը—6.

Հա. գնալուց առաջ հլա մի բարձրացա Միխակի տուն: Մարդ ենք, մտածում եմ, մահկանացու, հեռու տեղ եմ գնում, ով ե իմանում յետ գամ, յետ չգամ, գնամ մնաս բարով առեմ սրանց, նոր ճամփա ընկնեմ: Համ ել խնդրվեմ, վոր տանս վրա աչք ունենան: Շատ ել կողպեքով փակել եմ, բայց—ով ե իմանում... Մին ասի՝ չգնամ, բայց մտածեցի՝ վոր—լավ չի, հենց իրանք կը թշնամանան... Վերջապես իրանց տընկենցն եմ, պետք ե հայտնեմ ուր եմ գնում... Գնացի: Մութն եր, եսպես ութը կըլեր իրիկ-վա: Մարդ ու կնիկ, այսինքն Միխակն ու իրա կնիկը—Լիզինկեն—տանն եյին: Լամփը վառվում եր սեղանի վրա, իրանք ել նստած՝ մուրաբով չայ եյին խմում: Մարդը, իրա սովորութքի պես, յախամախեն բաց (հացի, չայի ժամանակը Միխակը միշտ կրախմալը վերցնում եր—«Նեղում ե» ասում եր), զնիկն ել՝ Քիշմիրի շալը ուսերին: Իսկ աղջկեքը՝ նուշեն ու Մաշեն, սենյակի մի ծերում հագնվում եյին. իրար շորեր եյին դզում: Ո՛, եղ աղջրկեքը: Չեյի սիրում յես դրանց: Ալիքը քսում եյին երեսները, պոռշները ներկում ու—հայդա՝ փողոց, բուլվար, վակզալ: Մաղ որը զլիրն եյին տալի... եղ որն ել եղպես քսվել եյին, վոր գնան... Ամբողջ որը դրանք տա-

— Ի՞նչ կը ինպերիք, ասում ե, — փող,  
ճանապարի ծախս: Նեղ տեղը վոր ընկնում ես՝  
մեզ հիշում ես, հա... Դու մեղանից բան մի  
խնդրիլ, ասում ե. — Ում գործն անում ես — գնա  
նրանից ինպրի: Եսքան ել վոր քեզ պահում ենք,  
— հերիք ե: Հիմի ել՝ եկել ես «Երևան եմ գը-  
նում»: Վանց չե, ասում ե, կալասկա լծեմ, պա-  
շար կապեմ, վոր տանես քու լիրը աղջկան...

Խոսում ե, խոսում. ել չի թողնում մի խոսք  
ասեմ. կարկուտի պես վրա յետ տալի: Հայ դու  
չուզեցիր իմ բանը անել. հայ լվացքս ընկավ  
դաղթականի ձեռը ու քու յերեսից փչացավ: Նա  
խոսում ե — աղջկերքը ծիծաղում են, նա խոսում  
ե — աղջկերքը ծիծաղում են: Ինչքան վոխ ուներ  
թափեց գլխիս.

— Երևան ես գնում: Արի, արի զուզեմ-  
զարդարեմ քեզ, անաղուհաց քրդի շուն...

Մինչև եղ նա խոսում եր, յես լոռում եյի:  
Ասում եմ հլա տեսնենք ի՞նչ ե ուզում սա: Գի-  
տեմ սիրաը երվել ե, նեղացել ե. թող խոսի:  
Բայց վոր տարավ ու բերեց թե՝ «անաղուհաց  
քրդի շուն», — ել չհամբերեցի: Մի վստո յետ դը-  
րի, մի վոտո առաջ, աչքերս խփեցի, բերանս  
բաց արի:

— Տո քրդի շունն ել ես, հայի շունն ել, ա-  
սում եմ. — Քու վոչ փողն ե ինձ համարկոր, վէչ

պաշարը: Յես ձեզանից, ասում եմ, փող ու պա-  
շար ուզելու չեմ եկել. ձեր փողն ել ձեզ ըլի,  
ձեր պաշարն ել: Յես եկա, ասում եմ, վոչ բա-  
րով ձեզ մնաս բարով ասելու ու վոչ թե փող  
ուզելու...

Կսում եմ ու ել մարդ, Միխակ չեմ հար-  
ցնում: Ենպիս եմ բարկացել, վոր գլխիս զափա-  
ղը ժաժ ե գալի: Յես խոսում եմ — աղջկերքը  
ծիծաղում են, յես խոսում եմ աղջկերքը ծիծա-  
ղում են:

Շատ վոր ծիծաղեցին — յետ դարձա հիմի ել  
պրանց.

— Դուք ինչի եք ծիծաղում, ասում եմ. —  
Մինը պըտի ըլի ձեզ վրա ծիծաղի, թթված պա-  
ռազներ, վոր քաղաքում մարդ չեք թողել — ամեն  
որ վակզալ եք վաղում՝ նոր մարդ գտնեք, ուսե-  
ըլ թոշեք...

Դրանց վոր շշուշերը թողին. ծի-  
ծաղները վերջացավ. ձենները կարեցին: Իսկ  
Միխակը կարմրեց, տաքացավ ու հանկարծ ձե-  
ռը սեղանին խփեց ու կանգնեց.

— Լոիր, ասում ե, — մի համարձակվիր իմ  
առնն եղան լեզու բանեցնել, թե չե ես բոպե-  
յին քեզ բռնել կը տամ:

— Ինչու համար, հարցնում եմ:  
— Քու եղ խոսքերի համար, ասում ե

— Բա ինչու, ասում եմ, քու կնկանը բըռանել չես տալի, յերբ նա ավելի վատ խոսքեր ե ասում:

— Զենդ կարի, ասում ե:

Ենտեղից կնիկը, աղջկերքը.

— Պապա, դուքս արա դրան, խելագար ե: Աղջկանը բռնելու որից, ասում ե, խելագարվել ե:

— Խելագարը դուք եք, ասում եմ, հողեմ ձեր զուտիւր, անխիղճ անամոթներ:

Ասի, զոտներս հագա, կապոցը վերցը ու դուրս: Միրտս թեթևացավ կարծես: Մինչև անգամ ուրախ եմ, վոր եղ խոսքերն ասի: Դրա համար եր, ասում եմ, խեղճ աղջիկս ասում, թե հարուստները խիղճ չունին. նրանք լավ են, յերբ քեզանից ոգտվում են, յերբ իրանց համար բան ես անում, յերբ խոնարհ ես: Դրսւստ վոր: Եղապես ել եղավ: Ու լավ եր, վոր եղպես եղավ: Աչքերս բացվեցին:

Դուրս եկա—տանս մի կողպեք ել՝ ավելացը ու գնացի վակզալ: Ենտեղ հասա վոր, տեսնեմ Պետրեն պալտոն հագին, մի Յանար ձեռին ինձ ե փնտրում հավաքված խալիսի մեջ: Ինձ վոր տեսավ.

— Ես խի՞ ուշացար, մայրիկ, ասում ե:

— Վոչինչ, բան պատահեց, ասում եմ:

Ու ել չասի թե ինչ:

Գնացինք ուղիղ վագոն մտանք:

Պետրեն ծանոթացը ինձ կանգըխտորի հետ:

— Սա իմ յերկրորդ մայրիկն ե, տսավ. պետք ե տանես Երեան: Առաջին անգամն ե գընում ե, ասում ե, — ենպես արա, վոր չտիրի:

Կանգըխտորը սև պալտոյով, յերկար տղաեր, շին վզիցը կտիսած: Ծիծաղեց Պետրեյի խոսքի վրա:

— Հանգիստ կաց, ասում ե, վոր պոյեզը չտանի—յես ինքս կը շալակեմ: Եսքան մարդ տանում եմ, բա մի մայրիկ չեմ կարող տանել:

Պետրեն թե՝

— Գիտեմ կը տանես, ասում ե, բայց լավ տանես: Ու յերբ Երեան հասնես, ասում ե, մայրիկին կը տանես ուղիղ Արտուշի տուն: Մենակ չթողնես, Երեանին անծանոթ ե:

Կանգըխտորը թե՝ լավ:

Յերեք անգամ զանգը տվին—պոեզը շարժվեց: Բայց ենքան մարդ կա վագոնում—շունչ կտրում ե: Ակուկելի ֆակ, ժողովուրդը շատ: Մեծ մասը զինվոր ե ու կամավոր: Գնում են Ղարս: Ղարսի կովի են վատ ժամանակն ե: Դըրանք զնում են ու խոսում—կովի մասին, թանգության մասին, են ժամանակվա փողի—բոնիրի—մասին: Բոլորն ել գանգատվում են, թե եարի բան ել կոիվ կըլի, վեց-սիսար տարի յե՞ աչք չենք

թափում. վրաները շոր չկա, տներումը՝ հաց. ելի՛ կոիվ... Խոսում են եսպես ու ծխում: Պապիրոսի ծխից շունչս կտրում ե, աչքերս մղկը-տում են, բայց բան չեմ խոսում: Ի՞նչ առեմք: Մտածում եմ, վոր խեղճ մարդիկ են, անից-տեղից կտրված. վորը կնիկն ե թողել տանը, վորը, ով գիտի, մանր երեխեք, հեր, մեր. վրա համար, դարդից՝ պապիրոս են քաշում: Քաշում են, վոր դարդները մոռանան: Հետո կրակի բերան են գնում, թոփի, սրի առաջ—ել սիրո կը զորի եղպես մարդկանց բան ասել: Ում հարցնում եմ «Տղա ջան, ուր ես գնում»: — «Կոիվ»... «Ղարս»... Կուրանամ յես, ասում եմ. կուրանաձեր մերը...

Դրանց նայում եմ՝ Յերվանդիս հիշում...

Եսպես գնում ենք, կանդրխտորը՝ անունը Սեղրակ եր—գնում-գալիս ե, սրան-նրան «բիլեթ» ե հարցնում ու գալիս կողքիս նստում. «Մայրիկ վնաց ես. պոեզը հավանում ես»... Հանաքներ ե անում, վոր շատ չմտածեմ, չտխրեմ: Լավ տղա եր—ասող, խոսող: Առավոտը վոր լուսացավ—պաշարի կապոցը բաց արի, երկու ձու տվի, հավի մի բուռ՝ լոշի հետ.

— «Կեր, ասում եմ, Սեղրակ ջան, դու ինձ վորդու համ տվիր»:

Ծիծաղեց.

— «Բա վոր Երևան տանեմ, ասում ե, ինչ պտի նվիրես...»:

Զինվորները, կամավորները Ալեքսանդրապուրումը իջան, մենք գնացինք: Մի ամբողջ որ ել գնացինք—նոր կես զիշերին հասանք Երևան: Են ժամանակ ել—կուկի տարի եր—պոեզները լավ չելին բանում: Ասում ելին՝ նավթ չկա. ճամփեն ել խանգարված եր: Դրա համար երկու որով զորով տեղ հասանք: Երևանի վակզալը մութն եր—ճրագ, կրակ չկար. մենակ զալումն եր լուս եր—ճրագ, են ել պեծի պես: Մարդիկ իջան, վագոնները դատարկվեցին, պրծան նոր կանգըլուտոր—Սեղրակը ինձ տարավ Արտօնշի տուն:

Եղ Արտօնշն ել ճամբու ծառայող եր. ապրում եր հենց եղտեղ՝ վակզալին մոտիկ, կազունի տան մեջ: Կնիկը սուս եր, երկու ել երեխառներ՝ շեկիկ մազերով, չալ աչքերով: Վոր իմացավ Պետրեն ե դրկելինձ—լավ ընդունեցին, պատվեցին, շնորհակալ եմ: Գիշերը քնեցի, առավոտը վեր կացա, տեսնեմ, եղ սուս կնիկը՝ սամափար ե քցել ու մի ենպես սեղան ե բաց արել վոր—մաքուր ձուն: Տնարար կնիկ եր. քիչ ու միշ ել հայերեն զիտեր: Զարթնեցի, ուզեցի վեր կենամ.— Զի թողնում:

— Զե, ասում ե, բարուշկա, քնի. նիշավո.  
հոգիած ես:

Յես, ի հարկե, չքնեցի: Քնելու համար եմ  
եկել: Վոտիս տակին կրակ ե վառվում. ասում  
եմ՝ շուտ անեմ, գնամ վիկտորիս տեսնեմ: Մին-  
չե վեր կացա, հազնվեցի—Արտուշը եկավ: Քցո-  
վի չայ տվին, մխրով արին, մուրաքա հանեցին:  
Չայի վրա բոլոր հանդամանքը պատմեցի Ար-  
տուշին ու վերջն ել՝

— Արտուշ ջան, ասում եմ, հիմի վրնց ա-  
նենք. յես ուզում եմ գնամ վիկտորիս տեսնեմ:

— Դա հեշտ ե, ասում ե: Կասենք հեռվից  
ես եկել, կը ինդրենք՝ կը թողնեն:

Չայից հետո վեր կացանք գնացինք: Կապո-  
ցը Արտուշը վերցրեց ու առաջ ընկավ. յես ել  
շալս առա՞նքա յետեից: Գնացինք հասանք բանա:  
Խնդրեցինք, վոր ուզում ենք բոնավոր տեսնենք.  
Սախն՝ կարելի յե: Եղ որը, իմ բախտից, տեսնե-  
լու որն եր: Հարցրին ում եք ուզում տեսնել:  
Ասի՞ իմ աղջկան, Վիկտորիա Դանելյանցին:  
Բանտի գլխավորն եր, ինչ—կանչեց ծառայողնե-  
րից մեկին, թե՝ Վիկտորիա Դանելյանցին բե-  
րեք: Ինձ ել Արտուշի հետ տարան մի ուրիշ  
սենյակ, վոր հետը խոսեմ: Թիշ հետո հեռվի կարի-  
գորից լսեցի թե ինչպես կանչեցին. «Վիկտորիա  
Դանելյանց»: Վախից թե ինչից, ել չգիտեմ,

սիրտս ենպես ե քցում, վոնց վոր բռնած ծիտ:  
Ինչ հալի պըտի տեսնեմ Վիկտորիս, մտածում  
եմ, տեսնես առժղջ ե, հագին շոր կա:

Եսպես մտածում եմ, մեկ ել տեսնեմ մի աղջիկ՝  
տղամարդու պինջակ հազած, եկավ յերկաթների  
են կողմը կանգնեց: Յես չճանաչեցի ով ե. Երեսին  
ուսնդ չկար. վիզը բարակել, տանձի կոթ եր դա-  
ռել. միայն աշքերն եյին երեսին պսպղում, մեկ  
ել կտրած մազերն եյին ուսերիցը հետ: Յեկավ.  
Նա նայեց ինձ, յես՝ նըան: Ինչպես երեսում  
է նա ել ինձ լավ չճանաչեց. չեր սպասում, թե  
եկած կրեմ երեան: Նոր դա.

— Մայրիկ, ասում ե, դժւ ես:

Սիրտս թուլացավ: Վեց ամիս եր ձենը չեյի  
լսել:

— Յես եմ, Վիկտոր ջան...

Ասի ու լաց եղա: Ել չկարացի ինձ պահեմ:

— Դե, լավ, ասում ե: — Լաց լինելու չես յե-  
կել: Ասա մի տեսնեմ ինչու յես եկել, ինչ կա:

— Քեզ տեսնելու, ասում եմ, Վիկտոր ջան:

— Ե՞ն, ասում ե, դրա համար ել ծախս ես  
արել, հասել եստեղ:

Խոսեցինք եսպես-ենպես, ու յես հարց-  
ուում եմ:

— Բա յեթը պըտի աղատվես, Վիկտոր ջան.  
— յեթը պըտի գաս տուն:

— Շուտով, ասում ե, մայրիկ, շուտնվ ըռուրս ել կազատվենք:

Ասում ե ու նայում դարասովի կողմը, վոր կանգնած՝ լսում ե մեզ:  
Յես ուրախացա.

— Վժնց, ասում եմ, ուրեմն գործը քննէլ ենու

— Ո՞վ պըտի մեր գործը քննի, ասում ե.

— Մենք կազատվենք առանց քննիչի եր, Մեր ընկերները կը գան շուտով, ասում ե, կազատեն:

Դա վոր եսպես սկսեց—դարասովը են կողմից, թե՝ «Եղ մասին չի կարելի, գործի մասին խոսեցեք, որիորդ»:

Խոսեցինք մի քիչ ել, յես «մնաս բարով» արի՝ դուրս եկա, վոր եքսի որը ճամփա ընկեմ բայց տուն հասա թե չե—խաբար եկավ, վոր թուրքերն Ալեքսանդրապոլը գրավել են, ճամփեն փակվել ե:

Այ քեզ խայտառակություն: Ի՞նչ անեմ հիմի... ել ճար չկար: Պետք ե մնայի...

Ու մնացի Յերևան, Արտուշի տունը: Մտածում եմ—սա ինչ վատ բան եղավ, եկա ես խեղճ մարդկանց տանը բեռ դառա: Բայց Արտուշը թե՝

— Վոչինչ, մայրիկ, ասում ե, մի մտածի. մեր մերն ես. քաշիլ մի... Մի կտոր հաց կը գտնենք...

Կնիկն ել մի կողմից.

— Նիչեվո, բարուժկա նիչեվո...

Եսպես անցավ մի քանի որ: Դարդ եմ ասում, տեսնես կազատվի՞ Վիկտորը, կամ յերը կազատվի, իսկ—Արտուշը ինձ սիրտ եր տալիս, թե շատ չի քաշի. շուտնվ, շուտնվ...

Մի որ ել դա եկավ թե՝ Մայրիկ, վեր կաց գնանք բանտ:

— Ի՞նչ կա. Արտուշ ջան:

— Մեր ընկերները եսոր բանտից դուրս են գալիս: Վիկտորն ել գրանց հետ:

— Վժնց թե, զարմանում եմ:

— Բա, ասում ե, կառավարությունը փոխվեց: Իշխանությունը հիմի մեր ձեռին ե... Նոր իմանամ, վոր ես Արտուշն ել բալշեկիկ ե, Պետրեյի ընկերը:

Գնացինք: Են ինչ վոր յես տեսա—պատմել չի ըլի: Ի՞նչ ուրախություն եր, չասանք ենտեղ, վոր մարդիկ հավաքվել-կիտվել են բանտի դրանք: Դրոշակներնվ, բաննվ: Ու մեկը դրանց միջից մի քարի վրա բարձրացած ճառ ե ասում բանտից դուրս եկածներին.

— Ընկերներ, դուք շատ չարչարվեցիք...

Եսպես-ենպես...

Դա խոսում ե, յես՝ աչքերս չորս արած

Վիկտորին եմ ման գալիս: Բայց եղքան մարդու  
մեջ Վիկտոր կը գտնվի՞: Դես նայեցի, դեն նա-  
յեցի—չկա: Մին ել—յերբ խոսողը վերջացրեց  
—նրա տեղը բարձրացավ Վիկտորը՝ ելի տղա-  
մարդու պինջակը հազին, կտրած մազերը բաց  
ուսերին կախ: Վեր կացավ ու՝

— Կատարվեց, ասում ե. են ինչ վոր մենք  
սպասում եյինք...

Ու խոսեց, խոսեց...

Դա խոսում ե—յես լաց եմ ըլում, դա խո-  
սում ե—յես լաց եմ ըլում: Ես անգամ ուրիշ  
տեսակ: Լաց եմ ըլում ուրախությունից...

Դա վոր խոսեց պրծավ—յես, խալիք մի-  
ջով, զորով մոտեցա դրան ու թեր բռնեցի.

— Վիկտոր:

— Վայ, մայրիկ, ասում ե:

— Յես եմ, Վիկտոր ջան:

Բռնեցինք իրար, համբուրվեցինք, ու յես լաց  
եմ ըլում: Արտասուրքս չի կտրվում: Լաց եմ  
ըլում ուրախությունից...

Դրանից հետո ամիս ու կես մնացի Յերևան՝  
Վիկտորի մոտ: Մնացի, քանի վոր ճամփեն փակ  
եր. թուրքերը նստած եյին Ալեքսանդրապոլում:  
Եղ ամիս ու կեսը ինձ համար շատ դժվար ան-

ցավ: Յես քաղաքին անծանոթ, բոլոր ժամանակ  
ել մտածում եմ՝ տեսնես տունս ինչ եղավ, ի՞նչ  
պատահեց: Թալանեցի՞ն, կտրեցի՞ն: Մտածում եմ  
ու սիրոս չի հանգստանում: Վիկտորի հետ ճա-  
շարան եյի գնում, գալի տուն: Նա գնում եր գոր-  
ծի, ժողովի—յես մնում եյի տանը ու մտածում ելի  
տանս մասին: Թալանեցի՞ն, կտրեցի՞ն: Ու սպա-  
սում եմ ճամփեն բացվի—գնամ: Մի որ ել—դա  
հունվարի վերջին եր—իմացանք մի պոեզ ե  
գնում թիֆլիս: Կամիսարի պոեզ ե: Վիկտորը  
դես ընկավ, դեն ընկավ, սրան խնդրեց, նրան  
խնդրվեց—պոեզումը տեղ տվին: Նստեցի եկա  
մեր քաղաքը: Զմեռվա են թունդ ժամանակն ե:  
Հունվարը: ցուրտը թրի պես կտրում ե: Վազ-  
ուում սառչում եյինք: Հասա մեր վակզալը—Պետ-  
րեն պատահեց:

— Բարնվ, մայրիկ, բարնվ:

— Բարին արկիդ, Պետրէ ջան:

— Ի՞նչպես գնացիր, ընկեր Վիկտորն ի՞նչ-  
պես ե:

Հարց ու փորձ ամեն բանից: Ասի՞ լավ գը-  
նացի, Վիկտորս ել շատ բարով ե անում: Դրուստ:  
Նա ասել եր, վոր բարե անեմ Պետրեյին և շնոր-  
հակալութին հայտնեմ իրա կողմից: Հետո տես-  
նեմ զրա դոշին մի կարմիր կտոր:

— Դու ել բալշեմիկ ես, Պետրէ ջան:

ԹԵ՛ հա. ինձ ընկեր Վիկտորն եւ բալշեիկ գրել: Այ թե հա, մտածում եմ: Հիմի հասկացա, թե ինչն եւ նա հարգում Վիկտորիս, ու նրա հետ ել ինձ:

Դա տեսավ տուն եմ գալիս, ձեռիս ել բան կա—քայլուն կանչեց ելի, նստացրեց: Ֆայտն նստած գալիս եմ տուն ու մտածում եմ, թե տեսնես ինչպես եւ տունս—անմվաս ե, բան եւ պատահել:—Եկա տուն: Հարեաններս են անզամփա պես սկի չզարմացան ինձ ֆայտնով տեսնելիս: Միխակի կոմիտե—Լիզինկեն եղ ժամանակ հայաթի դրանն եր: Ինձ վոր տեսավ—ուրախացավ:

— Աղջի, Աննա: Վերջապես եկար, ասում ե.—մենք ել մտածում ենք թե ինչ պատահեց խեղճ կոման. տեղ հասավ, հիվանդացավ:

Յես բան չխոսեցի: Նա ելի.

— Աչքներս ջուր կտրեց, ասում ե.—Վախում եյինք թե մի բան պատահած ըլի:

Ու հրավիրում ե իրա տուն չայի:

— Արի, ասում ե, արի, հոգնած, մրսած կը-լես. արի՝ չայ խմի, սամավարը դեռ տաք ե:

Հայաթը մտա, Միխակը պատահեց՝ բալկոնում կանգնած:

— Աղջի, Աննա, դժու ես, հարցնում ե.—Յես ել ասում եմ ես կոմիտ ինչ եղավ:

Ու սա ել մի կողմից ե հրավիրում չայի:

— Արի, ասում ե, մրսած կը լես: Արի: Բան չեմ խօսում: Սուս ու փուս, կապոցը ձեռիս գնում եմ դեպի պադվալը—իմ ոթախը: Իսկ նա,

— Քեզ չեմ ասում, աղջի արի, չայ խմի... Շատ վոր ասին—մարզը ջոկ, կնիկը ջոկ, — Ծնորհակալ եմ, ասի՝ ու մտա պադվալի բալկոնը: Մտա ինչ տեսնեմ—իմ դրան վրա ուրիշ կողպեք... Վոնց վոր կացնով զլիսիս տան: Ծնկներս թուլացան, մնացի սառած կանգնած. սառ ու տաք քըտինք եկավ վրես: Սիրտս վոնց վոր մզես: Ուրեմն տունս կտրել են, մտածում եմ, զրա համար սրանք ինձ վերև են կանչում, վոր սիրտս աւնեն:

— Ես ինչ բան ե, ասում եմ, ես ում կողպեքն ե:

Լիզինկեն թե.—Մերն ե, ասում ե.—Արի վերև, բալանիքը մեզ մոտ ե:

— Ի՞նչ ե պատահել, ասում եմ, տունս կտրել են, ի՞նչ ե:

ԹԵ՛ չե, արի վերև կը պատմեմ:

— Ել ի՞նչ գամ, ասում եմ.—բալանիքը ար-վեք, տեսնեմ ինչ ողբաթ ե եկել գլուխս:

— Վոչ մի ողբաթ ել չկա, ասում ե.—Հան-գիստ կաց. մենք եստեղ թշնամի չենք վոր թող-նենք քու տունը թալանեն:

Քաղցը խոսում ե. Ելի հրավիրում չայ խմելու:  
— Դու հլա արի չայ խմի, ասում ե, յես  
ամեն բան կը բացատրեմ:

Մարդը—Միշտակն ել մի կողմից:

Շատ վոր ստիպեցին—գնացի: Մարդ ենք,  
մահկանացու, մտածում եմ, խռով մնալն ել մի  
բան չի. թող իրանց արածի համար իրանք աշ-  
մանչեն: Ամիս ու կես առաջ շան լափը թա-  
փեցին զլիսիս, տանից համարյա դուրս արին—  
հիմի ինչ և պատահել, մտածում եմ, վոր եսպես  
հրավիրում են, ուզում են պատվել: Քարը գո-  
գիցս վեր ածի—գնացի: Մտա դրանց ոթախը  
թե չե—զարմանքից մնացի կանգնած: Տունը  
վոնց վոր կլպած, վոչ պոլին խալիչա կա, վոչ  
ակուլիելին՝ վարագույր, վոչ սեղանին՝ երես:  
Բուֆետի շկաֆը դատարկ ե, աթոռների մեծ  
մասը չկա, գիվանի խալչեն ու նախշած բարձերը  
չկան: Դիվանի վրա մի կարպետ ե հասարակ:  
Մի խոսքով տունը կարծես, պլոկած—թալանած:  
Իրանք ել հին շորեր են հագել—կանգնել:

Աղջկերքը եկան ներսի ոթախից.

— Բարով, Սննա, ասում են,—Յերևանը  
հավանեցի՞ր:

— Կա ելի, քաղաք ե իրա համար:

Տեսնեմ գրանք ել են հին հագնված: Ել  
առաջվանը չեն: Շախները կոտրած ե: Զե, մտա-

ծում եմ, եսաեղ մի բան կա: Կամ մի բան ե  
սպառանել սրանց, կամ բալշեկիկները սրանց ապ-  
րանքները տարել են: Ու հարցնում եմ,

— Ես ինչ բան ե, ասում եմ, ես ձեր ապ-  
րանքն ուր ե:

Լիզինկեն թե.—Պարվարումն ե:

Յես մասս կծեցի: Բալշեկիկներից վախեցել  
են, մտածում եմ: Զե վոր խոսում են, վոր բալ-  
շեկիկները թալանում են: Եղ վոր մտածեցի, սիր-  
որս ելի ան ընկապէ

— Բա իմ կողպեքը լիի՞ ե փոխած:

— Եղ վոչինչ, ասում ե լիզինկեն:—մենք  
ենք փոխել, վոր պինդ ըլի:

Տեր աստված! բան չեմ հասկանում: Մար-  
դիկ եսքան սրտացավ են եղել, իսկ յես կաս-  
կածում եյի: Սամավարը տաք եր. մի թաս չայ  
խմեցի խաթըրներից չըլելու համար, ու ասում եմ:

— Դե, բլանիքը տվեք, գնամ տեսնեմ տունս  
ինչ հալի յե. մուկը հիմի շորերս կարել ե: Նա թե՝

— Վախիլ մի, մենք ենտեղ կատու ենք քցել:  
Տեր աստված!

— Կատու եք քցել ասում եմ:—բա վոր  
ամաներս ջարդի՞: բաց դրված են:

— Զի ջարդի, ասում ե, մենք տեղափորել ենք:

Վարտեղ:

Թե՝ շիափում:

— Ի՞նչ շկափ, ասում եմ, — յես շկափ չունեմ,  
— Մեր շկափում, ասում եմ.

Յես զարմացա, ու նորից մասս կծեցի:  
— Զեր շկափը իմ ոթախում ի՞նչ գործ ունի:  
Միխակը թե՝ մենք ենք դրել:

Եղ ժամանակ նայեցի՝ տեսնեմ դրանց շկափի մինն ել չկտ ոթախում: Բայց թե ինչու են դրել իմ ոթախը — չհոսկացա:

— Բայց ինչու համար եք դրել, ասում եմ:

Լիզինկեն թե՝ վոչինչ, ասում ե, կարող ե պատահել ուրիշները տանելին, բանացնելին, ասինք՝ ամելի լավ է մեր Աննան, մեր խեղճը բանեցնի...

Ենտեղից աղջրկերքը. — Շկափի հետ ուրիշ բաներ ել կան, Աննա, ասում ե, գու կը բանեցնեա:

Իսկ հերը — Միխակը իրա կողմից.

— Ի հարկե, ասում ե, լավ ե մեր Աննան բանեցնի:

Յես, շշմածի պես, մնացել եմ կանգնած:

— Բայն չեմ հասկանում, ասում եմ, — իսա մի բալանքը տվեք, գնամ տեսնեմ ի՞նչ եք արել:

— Գնանք, ասում ե Լիզինկեն. — կողպեքը սկերեսնի յե, գու չես կարող բաց անել:

Գնացինք: Դա գուռը բաց արագ — ի՞նչ տեսնեմ. — իմ առնն ե, բայց իմ տան նման չի. իրանց բուժետի շկափը դրել են աջ պատի մոտ, մեջը իրանց ամաններով լցրել: Իրանց խալիչա-

ներից մինը՝ ծալած քցել են իմ տախտին, մինը յերկար փոել են պոլին. կատուն ել — իրանց սիպշարկը փուլը մած տալով, մոմուրով եղ տակ կատուն — պոչը ժամ տալով, մոմուրով եղ խալիչի վրովը գնում ե, զալի... Հետո՝ պատերի խալիչի վրովը գնում են շարել. մի կոլոր սեղան, տակին աթոռներ են շարել. մի կոլոր սեղան, տակին աթոռներ են սիթախի մեջ տեղը, իսկ իրա երեսով, զրել են սիթախի մեջ տեղը, իսկ իմ հացի սեղանի վրա քցել են իրանց սուփերին, ու զրա վրա զարսել են իրանց բոլոր վարեն, ու զրա վրա զարսել են իրանց բոլոր վարեն, ու զրա վրա զարսել են արել — չեմ ձարագույրները... Տունու ենպես են արել — չեմ ձարագույրները... Հա, պատերին ել մի քանի պատերիք չաշում... Հա, պատերին ել մի քանի պատերիք Են կախել վոսկեվարաղ ուամիեֆի մեջ... Մի կախել վոսկեվարաղ ուամիեֆի մեջ... Մի կախել վոսկերն առնել են բավադի տուն: Միալուսոքով տունս շինել են բավադի տուն: Մի տակ սումավարն ել մի կողմն են բազմացրել. մի մեծ սնդուկ ել զրել են վիճի կողքին: Ուզեցի բաց անեմ — փակ եր:

— Սա ի՞նչ բան ե, ասում եմ, Ես մնդուկը:

— Եղ ել մեր շորերն ե, ասում ե Լիզինկեն. — Սրանք կը բանացնես, Աննա ջան, ասում ե, — սա ել կը մնա եստեղ: Քու տանը, ասում ե, ձեռ չեն տալ: Քու աղջիկը բալշեիկ ե, իմանան բալշեիկ մեր ես — քեզ բան չեն ասի...

Յես, ինարկե, ամեն ինչ հասկացա:

— Շնորհակալ եմ, ասում եմ, ձեր պատվից. իմ ունեցածը ինձ հերիք ե: Զեր ապրանքը, ասում եմ, վոնց գոր բերել եք, ենպես ել տարեք: Դրանք՝ մարդը — Միխակը, ու կողինկեն, կանգնել են թե՝ «թող մի քիչ մնա, Աննա ջան, դու, բանացրու»...

— Ինձ հարկավոր չի, ասում եմ. — տարեք: Իսկ չեմ ուզում իմ հալովին հարամ խառնվի:

Երանք ելի խնդրվեցին. յես՝ չե՛ վոր չե՛: Ու  
ոկտեցի զբանց ապրանքը մեկ-մեկ դուրս առանել:  
Եղ վոր աեսան, իրանք—հեր, մեր, աղջկերք  
—եկան իրանց ապրանքը տարան: Ուրիշ ժամա-  
նակ վոչ մեկն ել բանի ձեռ չեյին տա: Հիմի  
տեսնեցիր—չորս չափանի ելին դառել. կնիկը  
մարդուց՝ եր ժրացել, մարդը՝ կնկանից, աղջի-  
կերքը—երկուսից ել: Կրում են ու նեղացած  
փնթփնթում. «Մեր ապրանքը քեզ չեր ուտի. ինչ  
վսաս պրտի ըլեր»... Եսպես-ենպես: Իսկ յես-  
րան չեմ խսում:

Կրեցին—նոր իմ տունը մաքրեցի՝ նստեցի:  
...Մ'սացի մ'ի երկու ամիս—Վիկտորս զրեց  
թե՝ արի երկան: Ունեցած-չունեցածս հավա-  
քեցի, մ'ի բանի բան ծախեցի, եկա աղջկաս մոտ:  
Հիմի, ես երկու տարի յե երկան եմ: Աղ-  
ջրեւ աշխատում ե՝ ինձ պահում: Ազատվել եմ  
սրա-նրա լվացքից: Գործս են ե հիմի, վոր կերտ-  
կուր եմ եփում ու տունը պահում: Վիկտորը տ-  
ռաջվա պես գնում ե ելի ժողովներ, մեկ-մեկ ել  
գեղերը, վոր կնանց ժողովներ անի, նրանց զրի  
ուն ու սիպտակը սովորեցնի: Ապրում եմ ականջս  
դինջ—ել վոչ լիզինկի ձենն եմ լսում, վոչ մար-  
դու, թե արի վոտնամանները սրբի, պոլիեր մա-  
քրի: Աստված յեթե Յերվանդիս իւլեց—Վիկտո-  
րիս գոնե ենքան խելք տվեց, վոր հողեց-հողի  
չկորչեմ...

Եսպես եղավ բանը...

ՀՀ Ազգային գրադարան



NL0398930

30032

ԳԻՒԸ 50 4.



## ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

„ՀԵՐՄԵՆ“ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՑԵՐԸ.

### ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ

1. Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ—Ծանոթներ, ժողովածու:
2. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ—Ժամանակակից Մելոդրամ:
3. ԱՏ. ԶՈՐՅԱՆ—Հեղկոմի Նախագահը:
4. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ—Գործադուր պիես:
5. ԱԼԻՔ.—Գրական-Բննադատական Ալմանախ:

### ՍՍՆԿԱԿԱՆ

6. ԱՏ. ԶՈՐՅԱՆ—Ելեքտրական լամպ, պատկերազարդ:
7. ՄԻՔ. ԶԱՌԱՅՅԱՆ—Մորեխ, բնագիտական հեքյաթ, պատկ.:
8. Ն. ԱԳՆԻՎՅԵՎ.—Մի Բաժակ թեյ, փոխ. Ա.Ի. Խնկոյան, պատկ.:
9. ԱՏ. ԶՈՐՅԱՆ—Խուժանը, պատկերազարդ:

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

10. ԲԱԴ. ԱՎԻԱԼԲԵԳՅԱՆ—Արևեն Թռիմախյան:
11. С. МАНАСЕРИАН—Озеро Гокчай, с предисловием инж. А. Каспаряна.